

13081

891.99⁰⁰
U-22⁰⁰
=

Центральная библия им. Ленина
гор. Йоку
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.
№

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

891.99

Մ-22

Երկ. ԱԾՄԻԿԱՆԵՑՆԵՐՆԵՐ

3876

և

35
Մ-22

ՎԻՇԱՊ

3876

14134

(ՊԱՏՄԻԱԾՔ)



ТИФЛИСЪ

Электропечатны „Г Е Р М Е С Ъ“ С. П. Едигарова
Մաղար. фլու. № 5. 1908

(28)

2003

2972

Ա.

Հաւախօսին Մարեանը զարթնեց, զգուշութեամբ վեր կա-
յաւ տեղից, հագնւեց, ու խրճիթից գուռը գուրս եկաւ:

Ծծմբային թանձր ծուխ էր նատել գիւղի վրայ, դաշտ ու
ձոր սքօղել, թումբ ու փոս մերել, ու Մարեանը չիմացաւ ծէգը
գցել էր թէ չէ. ոչ աղօթարանն էր նշարւում, ոչ գիւղի մէջ էր
ձայն ու ձոյն լսում: Միայն մօտակայ հանքագործարանի կողմից
լսում էր խուլ գլրդիւն, և մերթ մերթ երկինքը այն կողմից
վրայ շառագունում էր բովերի բոցից:

Հեռից՝ սարալանջերից լսեց տաւարի բառանչ ձորերի
մէջ արձագանք տալով:

— Զան, ձայն տւաւ Մարեանը մի խոր թառանչ քաշելով
երեսը դէպի սարալանջերը դարձրած: Այն բինաչիների տաւարն
էր արօտ գնում: Ինքն էլ էր մի ժամանակ այնտեղ բինաչի, այն
դալար մարմանդներում, կարկաչանոս աղբիւրների մօտ: Իր գը-
ռանն էլ էր մի ժամանակ անուշ, անուշ տաւար բառաչում: Ինքն
էլ էր կեփը գոգին ուրախ ու գւարթ կով կթել, մերոցք արեւ
նոցի հարել երգելով, բայց հիմիկ... հիմիկ դուռն էլ էր դա-
արկ, տունն էլ էր թափուր: Իր գլխի տէր թեանը կայտառ ձի
ուտած ամեն երեկոյ տես էր գալիս խիզանին, առաւօտեան բա-
ռ ու թարմ կարագ անուշ անում, և գւարթ վերագանում,
հիմիկ... հիմիկ, թանի երես էլ չէին տեսնում, և խեղճ ու
կրակ մարդը դառն աշխատանքով, արիւն բրտնքով՝ պիտի հայթ-
հայթէր առօրեայ ցամաք հացը հանքագործարանում, որը սո-
ված վիշապի պէս մռնչում էր ձորի մէջ, ծուխ ու բոց ժայթ-
քում իր անկշտում որկորից:

Աքաղաղները նորից թեին տալով կանչեցին, հաւերը սկսան
թառից իջնել: Ժամկոչը յօրանջելով ու կոպալի տալով անցաւ
սաղմոսագանգը հարելու: Այստեղից այնտեղից սայլերի ճռնչոց
լսեց, չնահաջոց բարձրացաւ:

Մարեանը կուժն առաւ, օթի ջուրը հաւերի ջրամանն ածեց,



1146

Կ1

ու վոազ վոազ գնաց աղբիւրից ջուր բերաւ ու մարդին զարթ-նեցրեց:

— Ծէկը գցել է, գլխովդ շուռ տամ, ասեց նա մարդին շարժելով:

Թևանը ցնցւեց, առթափ տեղը նստեց, աչքը երդիկին գցեց ու յօրանջեց ճապկըտելով, ու ինքն իրան ասելով. վեր կաց, վեր կաց, ճաշըուն տալի սովոր թևան, աղապարոն թևան: Քեզ են սպասում թին ու կուանը, քեզ է եաշում պլալան քուրան: Գնա, էլլ մէջը երկուտակ արա: Քո քեռը քո վրէն է:

— Սովոր չես, խեղճ մարդ, հառաչեց Մարեանը:

— Մարդի երես պինդ կը լինի, պատասխանեց թևանը. ամենը բանի էլ կը սովորի, ամեն ինչ էլ կը տանի: Բայց զործի դժւարութիւնը չէ ինձ նեղում, այլ մարդկանց թրքութիւնը: Խի՞ պ-տեմ այս օրին:

— Նեզ օրերին լայն օր էլ կը լինի, յուսագրեց Մարեանը:

— Գնաց մեր լայն օրը, բացականչեց թևանը. մեր աստղը ծլկեց, մեր քարը ծովն ընկաւ: Աղքատը մարդ չի... աղքատը իի՞ է ապրում:

— Աստեած ողորմած է՝ մարդ, քաջալերեց Մարեանը. սիրատը լայն պահէր, ճակատոր բաց, մուրացկան Է՞ս՝ թէ շորթի, չմարուր Է՞ս՝ թէ անգէտ: Խի՞ ես դարդ անում: Դարդ անողին դարդ չի պակասիլ:

— Աստեած ողորմածը իմ թշնամու տունն էլ չընկնի, կնիկ, բողոքեց թևանը: Զուր է: Ո՞չ վերև արդարութիւն կայ, ոչ ներքեւ ճշմարտութիւն: Խլող խլողի է: Աշխարհը զօռվինն է: Լոխ-բուրդ-գզի են տալիս գաղաղած գայլերի նման: Բայց գայլը լաւ է քանց մարդը: Գայլը մի կուշտ փորի համար է որս անում, բա գոռնվը... ես եմ որ ես եմ. զիփ ինձ համար է: Իմը խօ իմն է, քոնն էլ է իմը... Ճարումը ճար լինի արևին էլ տէրութիւն կանի, որ խեղճին, վատուժին տաքութեան ու լոյսի բաժին էլ չընկնի... է՞հ, գնամ, գնամ, ես կուտոր եմ: Հրէս շւանը (սուլիչ) կը տան, օրավարձից կընկնեմ:

Մարեանը մի զուսպ հառաչ հանելով ջուր ածեց մարդի ձեռքերին լւացւելու, հացի տաշտը շօշափեց, մի ջուխտ փափուկ հաց ընտրեց, կարմիր շիլա թաշկէնում դրած մարդի մէջքը կապեց ու նրան ճանպայ դրաւ գէպի հանքագործարանը, ուր նա ցերեկւայ

բանւոր էր: Այդ երկու ցամաք հացը պիտի լինէր նրա ճաշն էլ, նախաճաշիկն էլ առաւատից մինչի երկոյ:

Երբ ժամի վեցը խփեց, սուլիչները շնչացին: Գիշերւայ բանւորները մըջիւների պէս գուրս թափւեցին գործարանի խորշերից, ու ցերեկւայ բանւորները խկոյն բանեցին նրանց տեղը:

Օրը բացւում էր, աշխատանքը եռում էր, ժամերը սահում էին:

Բովերում խաւէխաւ ածած ածուխն ու հրահալիքը այրւում էին ճարճատմամբ՝ գեղնախառն կապտաւոն բոց վեր արձակելով: Հալոցների մէջ ատրաշէկ հալւածքը պըճպածում էր, ծփում կրակի ծովի պէս: Վիթխարի շոգեմեքենան տնքալով քուլա-քուլա գոլորշի էր ժայթքում: Ահազին թափանիւը անձարն զլորւում էր ու գլուրում, լայն փոկերի միջոցով աջ ու ձախ գանազան անիւներ, մեծ ու պղտիկ ճախարակներ շուռ տալիս: Նրանցից որը թեւրին տալով պերփում էր շոնդիւնով, հալոցների ու բովերի փուքսերին քամի մատակարարում, որը շչալով գարբնոցի ճղուղն էր պտոյտքում, որը խուլ գլորդիւնով քար կրնող տինգը բանեցնում:

Եւ այս ծովի ու մուխի մէջ, ծծմբային կծու հոտով տողորւած տոչորակէզ օդի մէջ, այս գլորդոցում, մրոտած ու քըրտնակոխ բանւորները շարունակ աշխատում էին մի անգամ բան զցած մեքենայի պէս անդուլ ու ճշգրիտ: Նրանը խումբ խումբ բաժանւած կուաններով ջուռուր էին փշրում, թերեփը զտարանը կրում, ածուխ ու ջոհար ածում քուրաները, հալոցներին խանձատ տալիս, երկաթ ծեծում, պողվատ խառտոցում, և մեքենաների պէս անքում ու տնքում:

Նրանք շոքով ընկած հեռում էին, բայց մղձկոտ շրջապատում օդ էլ չէին գտնում շունչ քաշելու: Նրանք մրոտ քղանցքներով հովանորում էին իրանց, բայց հրակէզ օդը հովութիւն չէլ տալիս նրանց այրւող երեսներին: Նրանք հալաւները թրջում էին աւազանում, բայց տաքացած ջուրը գովութիւն չէր տալիս նրանց խաշւող մարմնին: Ծուխն ուտում էր նրանց աչքերը, գործիքները գաղում էին նրանց ձեռքները: Նրանց կրծքերը շառաչում էին նրանց ձեռքները և քրտինքը նրանց ճակատներից վայր հոսում էր, հոսում:

— Սոդոմ-Գոմորն է սա, հառաչեց բանւորներից մէկը ծայրակեղ յոզնածութեան մէջ մի վայրկեան կանգ առնելով: Գետինը

կրակ, երկինքը բոց, հէնց եմ պլայլան թոնրի մէջ ճընջռստալիսւն Առածս էլ ինչ է.... փոկը կուղին չ'աժի:

— Արածդ ի՞նչ է, որ առածդ ինչ ըլի, Չատի, նկատեց նրան մի հասակաւոր բանոր:

— Բա այն շատ ստացողների արածնին ի՞նչ է, Մէսի-ապէր—պատասխանեց Չատին:

— Մէծ սարին մեծ ձիւն կընսաի, խրասնց Մէսի-ապէրը շերեփով հրահալիքը խառնելով: Այդ Աստծոյ գիտալիքն է: Էշը կը դատի՝ ձին կուտի—յանզը դա է: Մերն այն է, համբերենը ու հնագանդ լինենք: Եղոմքոր հորթը երկու մօր կըծծի:

— Շատ ենք լսել այդ խրատներից, կտրեց նրան Չատին փըշտելով ջուռուբը:

— Գիտում ենք, պատասխանեց Մէսի-ապէրը հեզնանքով ու գլուխը բարձրացնելով: Խրատողին էլ լսող պիտի: Տանից խոռվը բանիցն է խոռվում: Բանից խոռվողն էլ շորթի է դառնում: Իսկ թէ բեզարել ես, տեղդ թող գնա, սրանց ծրահան մի անիլ: Ամեն մէկը մի տուն է պահում իր աշխատանքով: Ոտիդ տեղ ես արել... պատառս խլող ես եկել:

Չատին հեղոցն ընկաւ: Զղածիդ, աւելի ուժգին ոկսաւ կուտանարել: Նրա թոյլ երակին էին գիտել: Բոլորն էլ գիտէին, որ նա տանից խոռվ էր, բայց խօ բանից էլ չէր խոռվ: Նրա համար բան ու գործը խաղ ու պար էր իրանց տանը: Նա գործի յանզն էլ էր գիտում, աշողակ էլ էր: Բայց նա խոռվեց տանից, հեռացաւ իրանց գիւղից միայն նրա համար, որ հայրը արգելում էր նրան պսակւել սիրած աղջկայ վրայ: Նա հեռացել էր իրանց գիւղիցը միայն գաղում անելու համար, որ իր աշխատանքով իր հարսանիքը գլուխ բերէր: Եւ հիմիկ նրա երեսովն են տալիս նրա արածը: Դեռ մեզազրում էլ են ծրահան անելում: Բայց ինքը նրանց տեղին կարօտ չէր, նրանց հացին աչքագրած չէր: Հանգամանքի բերմամբ էր նրանց մէջն ընկել, այն էլ ժամանակաւորապէսուի հարկէ, նայօֆարակամ չէր մտնիլ հանքագործարանը, որի մասին շատ բան էր լսել իրանց գիւղի ուսուցչից, բայց ի՞նչ արած, նրան փող էր հարկաւոր շուտով, իսկ փողը միայն այստեղ կարելի, էր ձեռք բերել, որ գնար իր մուրազին հասնէր:

Այսպէս մտածելով նա բորբոքեց և ուզեց մի լաւ շշպուկ, կոիւ սարքել, իրարով գցել բոլորին, բայց սուլիչը արդէն ճաշթող

ազդարարեց, և բանւորները ձեռաց բանթող անելով՝ շուապեցին իրանց պարկ ու պուրկի մօտ, խումբ խումբ նստոտեցին շւաքում խոնաւ գետնին, թէ մի կտոր հաց ուտելու, թէ մի քիչ հանգստանալու:

Չատին իր հացն առաւ մեկուսի նստեց: Նա մտածմունքի մէջ էր: Առանց այն էլ նա ոխ ունէր վերակացուի դէմ մի տուգանքի համար, հիմիկ էլ Մէսի-ապէրը աւելի էր գաղել նրան, ու յիշեցրել այդ տուգանքը: Եթէ այդ տուգանքը չըլինէր, մի քանի մանէթ աւելի կունենար, մի բանի օր աւելի վաղ կըտեսնէր իր սիրածին:

Մէսի-ապէրը նայեց նրա վրայ, ու մի տեսակ խղճի խայթ զգաց: Զէ որ նա էլ հայ բրիստոնեաց էր, թէն ուրիշ գիւղից:

— Դէ հանգիստդ առ, Չատի, ու տաղ արա, խրատեց նա մեղմութեամբ, մի պճեղ սոխ հացի միջուկում ջխտած բերանը տանելով: Քեզ խաստում չեմ, պողահարում չեմ, այլ խրատում եմ: Պառաւը գիտկան չէր, գլխին եկած էր: Ուշ կալ ինձ—հացդ յամաք չես ուտիլ: Բեզարած ձին կ'անկուշի: Դու էլ բեզարած էիր—այս էլ քեզ հանգստութիւն:

— Սա հանգստութիւն չի, պատասխանեց Չատին բթի տակ:

— Բա ի՞նչ է որ, հարցրեց Մէսի-ապէրը:

— Դադար, որ շունչդ առնես, պատասխանեց Չատին: Նըրանց մայրը մեռնի... եզն են վերակացնում տակէն հորթ ուզում, չէնց գառաւ հանգստութիւն էլ տակին:

— Խամ ես, ասեց Մէսի-ապէրը, որ մեզ պէս սովոր լինէիր, հանգստութիւնից գագ կանէիր: Կիւրակին սթնեցնել չի լինում, քնում եմ, քնում, ոււչում, էլի գալիս գործարանով զիրաւ անցնում, զինետունը մտնում, ու ամբողջ օրը ճեճեքւածի պէս լինում: Մեր երեսը պարզ անողը աշխատանքն է:

— Հորթ է, հաստատեցին ուրիշ բանւորներ, որոնք ուրիշ ոչ մի հանգստութեան տեղ չէին տեսած, ոչ մի օգտաւէտ զբաղմունքից տեղեկութիւն չէին առած. մեզ պահողը հանքագործարանն է: Էլ ուրիշ ի՞նչ միփիթարանը ունենք—չէն կենաց սա:

— Կործանուի սա, կտրեց նրան Չատին սրդողած: Սա զժուսք է, գժուսք, ուր չարքերը մեզ չարչարում են, մզում մեծ գների համար: Մեր կաշին քերթում են, մեր վաստակը պլոկում, մեր արիւնը ծծում:

Մէսի-ապէրը սարսափած հացի պատառը բերանիցը յետքաշեց: Բոլորը ապշած նայեցին իրար երեսի, կարծեցին թէ երկինքը վլւեց նրանց գլխից վեր: Ի՞նչ կըլինէր նրանց վիճակը, եթէ վերակացուն լսէր այդ սարսափելի խօսքերը ու նրանց բոլորին էլ խոկել տար: Կամ գուցէ Զատին ղիտմամբ էր այդպէս անում նրանցից խօսք գուրս քարշելու համար, որ նրանց տունը քանդէր, ծուխը կտրէր:

Դու քանի՞ գլխանի ես, զոռաց Մէսի-ապէրը և ուզեց վեր կենալ նրան ծեծել ու խոկել, բայց էլի նստեց: Տնաքանդ, այդ ի՞նչ հովեր ես բերել գէսը, շարունակեց նա կատաղած: Չար գնի պէս փորձում ես մեզ: Մեր գլուխը ծախւած է, մենք վար չունենք ձեզ պէս, մենք տափ չունենք: Մեր վարն էլ է սա, մեր տափն էլ: Մենք սրա կաթնատու կովերն ենք, սա էլ մեզ հաց տուղը: Ուզում ես ջրից հանած ձուկը շինել մեզ: Ռըհելըդ քաշիր, մեր բանհողը չես... գու ով, մենք ով... Սա որ բեզ համար դժոխք է, մեզ համար մայր է...

—Տիրոջ համար է մայր, մենքը համար է դրախտ, պատասխանեց սառնութեամբ Զատին: Թէ կաթնատու կովեր էք, արածնիդ ո՞րն է: Ես անձար չեմ, ես բուռը մտնող չեմ, ինձ էլ մայր է ծնել: Դառաւ բանուոր եմ, խօ գերի չեմ: Շատ կասէք, վէշս ըշակը կըտամ, կըդնամ ի՞մ արնք ձայնն անելու: Ես նմ գութանի մանին մատաղ, ամոլի լծին մատաղ, վարի ծրին մատաղ: Հօր հոգու չեն ինձ վարձ տալիս, որ տապ անեմ, շարունակեց նա տաքացած: Քրտինք եմ թափում, քրաբինք: Մի կաթիլ քրտընքի գին կըդառնայ տւածնին: Հոգիդ հանում են, մի կտոր հաց տառ միս ճշդալով, կէմն էլ ձեռէդ խլում: Դուք հիէ մեղմէրուց տւէք...

Բանուրները հաւանութեան նշաններ տին, ու Մէսի-ապէրը մնաց տարակուսած: Նրա սիրտն էլ էր վկայում, որ այդ այդպէս է, բայց կարող էր դրանից աւելի վատ լինել, եթէ վերակացուն իմանար, ուստի նա ուզեց հանարի գնել ու վերջացնել վտանգաւոր խօսակցութիւնը:

—Զէ մի, տանձը բերանդ ընկնի, կոթն էլ վերև, ասեց նա հեղանաքով: ով կանի—կուտի: Տէրն անողին է պարտական: Հաց տուղի վրայ հաջիլ չեն: Էսդուր էլ Աստւած խռովում է մեր գլխին: Աստւած է մեծին մեծ շինել մեր գլխէն վեր: Մարդ երեսի քրտնքով պիտի ուտի իր հացը—այդպէս է Աստւած անիծել

Աղամին ու պատմել: Տես, անհնազանդութիւնը ուր է տարել: Դա մեր պատիմն է:

Թեանը մի խոր թառանչ քաշեց: Կարծես Զատին նրա ուրատիցն էր ձայն տալիս, կարծես Զատին նրա աչքերը բացաւ, և այն՝ ինչ նա մութ կերպով զգում էր, հիմիկ երեսութացաւ պարզորէն: Նա տեսնում էր դժոխքի պատկերը. դատապարտւած հոգիների պէս մեծ ու պղտիկ տանջում են կրակի բոցերում: Նըրանց այրւած սրտին մխիթարանք տւող չը կայ, նրանց մորմոքւած հոգուն հովութիւն տւող չը կայ: Մի պատառ հացի համար բանեցնում են, տանջում, ձենձերում: Առանց այդ մի պատառ հացի ապրել չի լինում, սոված երեխան հաց է ուզում: Սոված երեխային մի պատառ հաց տալու համար անձարացած հայրը ինքնակամ մանում է դժոխքը և գերի դասնում մինչև հոգին տալը. որ իր խեղճ երեխան էլ անցնի նոյն ճանապարհով անխօս, անտրտունչ: Բայց ինչո՞ւ այդ դժոխքը մայր է տէրերի և կառավարիչների համար, որոնց երեխաները հացի կարօտ չեն քաշում, անհոգ են, ուսում են առնում, բախտաւոր մեծանում: Նըրանց այդպէս գոն ու բախտաւոր շինողը գտատապարտւած հոգիներն են, որոնք զրկւած են աշխարհի բարիքից: Ի՞նչու է Աստւած այսպէս խտրութիւն զրել մարդկանց մէջ, որ մէկը չափից դուրս աշխատելով սոված մնայ, մէրւոյ մէջքնց էլ չըկուանալով կուշտ ապրէ: Թէ պատիժ է՝ բոլորինն է:

—Դժոխք է, յանկարծ աղաղակեց նա: Դիփ սուտ է: Ո՞րն է թէ տէրն անողին է պարտկան: Սրանից էլ շատ աշխատանք չի ըլիլ—ուր է մեր հացը, սրանից էլ շատ քրտնել չի ըլիլ— ո՞րն է մեր հանգստութիւնը: Խի՞ չեմ ես իմ տափի վրայ քրտնում, ա մեր պապերը խոր գնան: Այս ի՞նչ օրի, ենք—անձարութեան գերի գարձած: Այս ի՞նչ երեսպաշտութիւն է, որ աղամորգու պատիժը դիփին էլ ֆաշիլ չեն տափս. ես էլ պիտեմ չոր հացս ուտիլ իմ երեսի քրտնքով, նա էլ պիտի եղապատառն ուտիլ իմ երեսի քըրտնքով: Մշակն արժանի է իր կերակրին, բայց մենք դրան էլ չենք արժանի: Ուրիշն իմ քրտնքով գոլափ, իմ երեխան պորշկած ու զուրկ: Հարուստը հարստանում է, աղքատը աղքատանում: Աստւած եղը դմակին է քսում, պարկը ջուալի վրայ դնում: Այս ի՞նչ օրի ենք—վիշապի ողիսի: Աստծոյ պատիժը խի՞ չի հաւասար բաժանած դիփի վրայ...

Բանւորները լացակումեցին զգածւած։ Ամեն մէկն էլ զգում՝ էր այդ բոլորը, շատ վաղուց է զգում, բայց հարկադրւած էր տանելու ամեն զրկանք, ամեն ճնշում և անարդարութիւն մի կտոր հացի համար։ Էլ թնչ էին կարող անել բացի իրանց ոյժը, իրանց առողջութիւնը ծախիլու մի կտոր հացի համար, քանի որ ոչ մի արհեստ չէին իմանում իրանց գլուխը պահելու, քանի որ գիտակ չէին յոգնած հողը պարարտացնելու, բարգաւաճելու մշակութեամբ, քանի որ որդին հօրից տեսածի պէս էր ապրում անշեղ, քանի որ փոխւած պայմանների համաձայն յանգը չէին մտածում գըտնել, քանի որ ամեն պատահար Աստծոյ անօրինութեանն էին վերագրում, քանի որ խարխափում էին տղիտութեան մէջ։ Խոնարհութեան և հնագանդութեան սովորած, բնականաբար մնում էին հլու ամեն մի ոյժի։ Նրանց բախտը վճռում էր ճակատագիրը, իսկ նրանց ճակատագիրը արին տառերով էր գրւած։

Մէսի-ապէրը սակայն թեանի խօսքերի վրայ աւելի վառեց և իր սովորական զգուշութիւնը մոռացած բացականչեց։ Էյ տիրացու, այդպէս պիտի տէրտէրութիւն անիլ։ Հողեղէն տեղովդ Աստծոյ արածը երեսպաշտութիւն ես շինում։ Մէնք էլ չենք երկաթի, բայց իրաւունք չունենք հակառակելու, որովհետեւ մեր հայրապետները մեզ անւանել են հնագանդութիւն տէրերին, համբերութիւն։ Հայրապետները սուտ են ասել։

— Դեն ասողին մտաւ, լսողին էլ մտաւ, կտրեց նրա խօսքը Զատիւն։ Դիմուն էլ իրանց օգտի համար են տաշել։ Անկեռիք գայլեր են նեղել, կեռքաւորներին հարակաց։ Անկեռիքը խրատել է, գառը շինել, կեռքաւորին լաշիդ ըրել, որ իրան էլ բաժին ընկնէր։ Եթի խեւ են, գիտում չեն ուրբաշի քրտինքով ապրելը ձեռնատու է։ Նրանք մի ճոթի կտոր են... ես տաւար չեմ, որ միսս ուտենակաշիս էլ տրեխ շինեն։

— Սա իր ջահել տեղովը մեր գլխումը խելը կը դնի, մեր բերանումը լիզու, ասեցին մի քանիսը։

— Փորը կոշտ է, նկատեցին միւսները։ Հացի կտրածը սուրը չի կտրիլ։ Ասանց հացի սիրտդ էլ կը սեանայ, օրդ էլ կըմթնի, կեանքու էլ կըխաւարի։

— Կենդանաչ են տալիս, ասեց Մէսիսի-ապէրը երեսը շուռ տալով։ հաչող են, կծող չեն։

— Գեղ կանգնի՛ գերան կոտրի, պատասխանեց թեանը։ Մէ-

նակը կենդանաչ կըտայ։ Այն որ ասում են՝ անշուն շէն էր—անփայտ ման գէր—նհէնց է դառել մեր բանը։ Պակասութեան աչքը դուրս գայ, մենք էլ հարու տւողներիցն ենք։ Այդ լաւ եմ տեսնում։ Որ մենք էլ վար ունենայինք, սրտամեծ կը դառնայինք։ Ես եզան ուսին մատաղ, գութանի մաճին մատաղ։ Այ՝ Զատիւն։ հանդեր- նին շատ, հացնին առատ. դէ լեզուն էլ կտրուկ կը լինի, կուռն էլ հատու, աչքն էլ սուր։ Հացը բերան էլ է փակուս, աչք էլ կապում, թնչ անենք։ Հանդը չբերի, ամբարը դատարկ, պարտքը վզիր։ Ո՞ր ծովս ընկնես։ Պարտքատէրը դուսդ կտրած, հարկա- հանը երդը կալած, երկխէդ էլ փէշէդ կախ ըլած հաց մըուլն- գալիս... Դէ մենք էլ մենք էլ մեր գլուխը ծախեցինք մի կտոր հացի, որ մեզ քերթեն՝ իրանց գերին շինեն։

— Այ՝ մի վերակացուն լսի, կանանչ-կարմիրնիդ կապի, ա- սեց։ Մէսիսի-ապէրը։

— Ղորդ որ, հեգնեց Զատիւն։ վերե Աստւած, ներքե նրանք։ Հացափորի շնէր, հաց գցողի վրայ հաջում էլ էք։ Էշը կը դադի, ձին կուտի։ Խի խօսաս, որ կաշիդ մաշկեն, խի հանգստանաս՝ որ տուգանք գցեն, խի հիւանգանաս՝ որ տեղից ընկնես... Դէ տեղին արդնակ թոգուփուլ կանեմ զնամ էլի...։

— Այդ գու արիր, բա մենք, պատասխանեց Մէսիսի-ապէրը։ Ո՞վ մեզ հաց կը տայ։ Մեզ կրակի մէջ մի զցիլ, թող մեր սկ օրը լանք, մեր եղովը տապակւենք։ Հալումաշ եմ դառել այս կրակի բոցի մէջ, բայց թնչ անեմ որ ըստանեմ։ Մրտէս տալիս է, որ ինձ էլ գցեմ հալոցի մէջ, պրծնեմ պատուհասից։ Բա խիզանս։ Լաւ եմ գիտում, որ հիւթու մզած կլեպս շպրուիլ պիտեն, բայց որ չես կարում ձեռը կտրել, պէտք է պաչես։ Փրկութիւնը վերնուց պի- տի—մենք մեղք ենք քաւում, պատիժ ենք քաշում... Հողի հետ կոիւ տալով թնչ էինք ստանում, հասկը մուր էլ զցում, արտը շիլ ու արիճ. մի զօլէն մուկն էր կրում, մի զօլէն կարկուտն էր թակում. քոչորների ուռւն էլ ասիլ մի։ Մեզ հաց տւողը հանգա- գործարանը մնաց։ Որ սա էլ խափանւի—մենք սովամահ կըլենք։

— Է՛՛, բրիչակ դասնայ սա, խոր դնայ սրա առաջին քար դնողը, ասեց թեանը թառանչ քաշելով։ Մի փոր հացը մի հոր հացից զցել է մեզ։

— Այ տղայ, դու էլ գեղ եաշիր, վրայ պրծաւ Մէսիսի-ապէրը- այստեղ են ասել. իր պոզը իր աչքը հանեց։

Թևանը ուզեց պատասխանել, բայց սուլիչը շշաց, ու բան-
ուրները վեր կացան բանի:

Զատին ջուռուրը ձեռնասայլով դուրս տարաւ: Մէսի-ապէրը
աչքերով հետեւեց նրան՝ զլսին թափ տալով:

—Գլխումը մի խոն արիւն կայ, ասեց նա. պրիստաւի երես
տեսած չի, մտրակի համ ճաշակած չի: Թարժասիօնի հացից կըտ-
րած կըլի—մենք իրար գալ չենք:

—Այստեղ են ասել գեղի համար լացողը աչքից կըլնինի է,
ասեց Թևանը խեղճ խեղճ. նա մեր ցաւն է ցաւում, դուք ծաղ-
րում էք: Սուտ է, որ մեր հացողն են մեզ ողորմութիւն անում...
Այսքան զրկանք կըլի—դանակը ոսկրին հասաւ է:

—Ատա դու էլ ես խօսում, յանդիմանեց Մէսի-ապէրը իր
տեղն անցնելով. սա քեզ ծիծ է տւել:

Քմծիծաղ տւաւ Թևանը հալոցին խանձատ տալով, ու մի
քոպէ յետ նայելով պատասխանեց գաւուութեամբ. ներսն ինձ է
այրում, դուրսը ձեզ: Սրա տւածը մօր ծծի կաթը չէր, իմ հօր
արնագինն էր: Տւաւ էլ, առաւ էլ: Ո՞րին չի արնաքամ արել սա:
Ինձ էլ կարօտ շինեց, որ ինձ էլ մաշկեն: Հաց են տալիս այնքան
որ ոչ կշանաս՝ պողեր հանես, ոչ սովից սատկես՝ նրանց երկու
աշխատաւոր ձեռքից գցես: Մեր մէջքն ու մեր կուն է նրանց
պէտք: Անիծեն մեր հայրերը, որ սադում անելու համար վիշա-
պին տեղ տւին իրանց շէմքումը... Որ մեզ թլըսորի, մեր ոտն
ու ձեռը կապի իր փորի համար... որ կաթ կաթ ծծի մեր արիւնը,
մեր կարմիր արիւնը...

Բայց Թևանի խօսքը բերանումը մնաց, բանւորների սարսափ
վերակացուն յանկարծ ծառացաւ նրա առջև և շանթակէզ հայեացը
յառելով Թևանի աչքերին, գոռաց. տուգանք կէս օրավարձի:

—Ինչի՞ բողոքեց Թևանը, որ գեռ չէր հանդարտել յուղ-
մունքից. բանս է պակմա, թէ գործ կիսատ...:

—Շուն, լանթ էլ ես տալիս, պրարեց վերակացուն, և իր
ամենակարողութիւնը նորից նշանց տալու համար ձեռքի ճիպո-
տով դաղեց Թևանի ուսը:—Տուգանք ողջ օրավարձի...

Անարեկւած բանւորները իրանց կաշին պաշտպանած լինե-
լու համար լուռ ու մունջ և կըկնակի արագութեամբ շարունակե-
ցին իրանց տաժանական աշխատանքը: Նրանց մտքով անգամ
չանցաւ զրկուող ընկերին պաշտպանելը, նրանք այդ անիրաւու-

թեան դէմ ցոյց չըտւին բողոքի նշոյլ անգամ: Անիրաւութիւնը,
ձնշումն ու զրկանքը սովորական միջոցներ էին բաղաքակիրթ տէ-
րերի ձեռքին ըմբռութեան տրամադրի բանւորներին զսպելու
համար: Երբեմն գէճն էլ չորին էին խոռոնում բոլորին ահ ու սար-
սափի մէջ պահելու համար: Եւ իրաւագուրկի, ստրկացած բանւոր-
ները չէին աղաղակում ցաւից, չէին մաքառում անիրաւութեան
դէմ, այլ աշխատում էին խոռոսիկ ամեն պատահարից՝ անլեզու
և բթամիտ ձեռնալով և քծնող դառնալով: Ու ամեն մէկը իր
կաշւի վրայ մտածելով, իրան հեռու էր պահում միւսներից, որ
պատուհասի շորցովը իրան էլ չըդիպչէր: Ու չէին խորհումնրանք
ընդհանուր ցաւին դարման գտնելու, ու չէին խորհրդակցում իր-
ար հետ այդ մասին: Մէկը միւսից խոռոսիկում էր, մէկը միւսին
չէր հաւատում, որովհետեւ պատերն էլ ականջ ունէին: Սարքած
լրտեսութեան չնորիւ և կառավարչի աչքին լաւ երեալու համար՝
նրանք հսկում էին իրար, իրար ոտի տակ փորում, և քարոյական
անկման հասած՝ իրարից հեռանում: Ու այսպէս ոչ մի կապ չըկար
նրանց մէջ: Նրանք կենդանի մեքենաներ էին միայն և եթ, տի-
րոջ զսպանակով շարժւող:

Զատին էր, որ առաջին անգամ նրանց հետ խօսեց սրտաբաց
և պատուհաս բերաւ Թևանի զլխին: Զատին էր, որ նրանց վէրքը
բաց արաւ, թէկ բոլորն էլ զգում էին իրանց սրտում այդ վէր-
քի այրուցքը, և միայն մտքներում անիծում տէրերին և նզովում
վերակացուներին, որոնք աւելի ժանտ էին քանց տէրերը: Դրա
համար էլ թէկ խղճացին Թևանին, բայց իրանց հաւաքեցին, կուճ
եկան, ամեն մէկը ուրախանալով հէնց նրանով, որ ինքը չէր տու-
ժողը, ուկի ընկնողը:

Ու մնաց Թևանը լքւած, խորտակւած:

Ի՞նչ լուր պիտի տանէր տուն:

Նրան տեղ չէր գալիս ճիպոտի հարւածը, նրան այրում էր
օրավարձից զրկելը: Նրա սիրու կծկուում էր, շունչը կտրուում:
Նրա պատառը խլեցին, թէկ նա աշխատել էր: Ի՞նչ անէր, ում
դիմէր: Վրա ընկնէր՝ հաքոէր վերակացի վիզը, այն հաստ վի-
զը, ու ծծէր՝ ծծէր նրա արիւնը իր ծծւած արեան փոխարէն,
թէ գնամք գանգատէր: Բայց որի գանգատը տեղ հասաւ: Զէ որ
բոլոր զգանգատների պատասխանը եղել է տուգանք, հետեւանքը
ծեծ ու զրկանք, և սաստւած գանգատաւորները ստիպւել են փոր-

առղ տալով յետ լիզելու իրանց թուքը, որ տեղից չըպրկւն։ Հիմիկ էլ կը կրկնէր նոյնը և գուցէ վզակոթին տալով խռկէն։ Էլ

Մի քննութեան բանուրի համար կառավարիչը չէր կոտրի իր օգտակար վերակացուին, որ բանուրները չոտնաւորէին: Որ մէկին չըհետևէր միւսը, մէկի կողքին չըկանգնէր տասը, հարիւրը, որ գանգատը բողոք չըդառնար, բողոքը՝ պահանջ. որ բանուրներ յանկարծ չըզգային իրանց ոյժը, չըհասկանային իրանց իրաւունքը և տէրերի պարտականութիւնը, մինչդեռ իրաւունքը տէրերինն էր, պարտականութիւն՝ բանուրներինը:

— Շուշը շան ոտը չի կոփիլ հծծաց յուսահատւած Թեանը և գլխակոր շարունակեց իր աշխատանքը առաջւայ պէս դառն մըտքերի մէջ խորապուզւած...

F.

Այդ ձորը, ուր խրոխտօրէն բարձրանում էին հանքագործարանի ամպամերձ ծխնելոյզերը՝ ժխոր և իրարանցում յառաջացնելով, մի ժամանակ ներկայացնում էր մի խաղաղ անկիւն։ Եթ-ջապատի թաւ անտառներում վխտում էին կխտար ու բախրայ, հովասուն մարմանդներում արածում էին հօտեր ու նախիրներ, մարգագետիններում կայտում էին գիւղական մանուկները ուլերի և գառների հետ, սարալանջերի կուրծքը ակօսում էր գութանը։ Կեանքի աղմուկը չէր վրդովում այդ լեռների հանգիստը, կապիտալի շունչը չէր փոթորկում նրանց խաղաղ կեանքը, ու գիւղացին՝ հետու ալեծածան աշխարհից, անարգել վայելում էր Աստծոյ պարգևները անտրտունջ և ապահով, մէկը միւսի հետ փոխանակելով իր ունեցածից։

Ժամանակի ընթացքում Աստծոյ անտառներին էլ տէր կանգնողներ գուրս եկան, մարմանդներին էլ, ու գիւղի տափերի շըրջանը սահմանափակւեց։ Բայց գիւղացին չը համակերպւեց նոր հանգամանքների հետ, մնալով առաջւայ անհոգ, պարզասիրտ գիւղացին, ամեն ինչ երկնքից սպասող, իրանց պապերի թողած հետքերով քայլ առ քայլ ընթացող։ Բայց երկինքն էլ էր գիւղամակում, հողն էլ էր պառաւում, ժամանակն էլ էր փոխառում, վաղշան առատութիւնը նւազման շրջանը մտնում, ապրօւստը գիւղանում, միայն գիւղացին էր մնում անփոփոխ իր տպիտութեամբ

և անշարժութեամբ, սաւման կէտում կանդած, յոյսը Աստծուն
գցած, ամուլ և տարտած:

Եկան նոր նոր մարդիկ, շղոմքոր մարդիկ, հին ժամանակներից
միացած հանքերը փորփորեցին և գիւղացիներին փայլուն ապագայ
խոստանալով հանքագործարան հիմնարկեցին նրանց տափի վրայ:

Սկզբներում հանքագործարանում լաւ օրավարձ էին տալիս
թէ աշխատաւոր ձեռքերի պակասութեան պատճառով, թէ գիւղա-
ցիներին հրապուրեկու համար: Աշխատանքը գնահատաւում էր, վար-
ւողութիւնը մարդագալիք էր, ուստի և հանքագործարանը Աստծոյ
ողորմութիւն համարեց գիւղացիների համար, որոնք ոչ մեծերից
ու մեծաւորներից քաղցր խօսք էին լսած, ոչ աշխատանքից փո-
ղի երես տեսած: Նրանք ոչ այնքան ստանում էին վարուցանքից,
որ աւելորդը ամբարէին կամ ծախէին, ոչ հաղորդակցութեան ճա-
նապարհներ կային շփման և առուծախսի գիւղութիւն աւող: Պա-
հանջ էլ չըկար, առաջարկ էլ, բայց բոլորը հաց ունէին իրանց
արդնակ և ապրում էին միատեսակ, միայն հարկ տալու համար
փողի կարիք գգալով:

իրանց վարն էլ էին իրանք անում, իրանց հագնելիքն էլ էին իրանք գործում, իրանց գործիքներն էլ էին իրանք շինում տներում: Ամեն մէկը թէ ընդոծին որմնագիր էր՝ թէ գարբին՝ իր համար, թէ մշակ էր, թէ տէր իր համար, և ընտանիքի բոլոր պիտոյքը տնացիք էին պատրաստում տնային միջոցներով: Բայց այդ բոլորը ձեռք էր բերում գժւարութեամբ, և ձեռք բերածն էլ չէր համապատասխանում թափածաշխատներն, որովհետեւ թէ գործիքներն էին նախնական ձեռք մի կերպ ձեռակերտած, թէ գործելու եղանակն էր ինքն իրան սովորովի մի կերպ: Նրանց մէջ ոչ հարուստ կար՝ ոչ աղքատ, ոչ վաշխառու՝ ոչ մուրացկան, ոչ շահագործող՝ ոչ շահագործող: Եւ որովհետեւ իրանց առանին կարիքը լրացնող աշխատանքից զատուրիչ ոչ մի զրազմունք չըկար, ուստի ամբողջ ամառը չափեց գուրս աշխատելուց ու տանջւելուց լետոյ ամբողջ ձմեռը նստում էին պարապ, սպառում ամառայ բերքը առանց յոյզերի, առանց իրարանցման, որ իրանց անասունների նման մի կերպ ձմեռնահան լինէին ամառը նորից տքնելու համար:

Բայց հանքագործարանը կերպարանափոխեցնը կամը Նը ամբարտականը աշխատանքի տեղ գտան ամեն օրւայ համար, փողի ե-

բես տեսան դրած աշխատանքի փոխարէն: Հանքային աշխատանքը ապահով էր և արդիւնաւէտ քանց դաշտային աշխատանքը, որովհետեւ նրանց տափը քիչ էր ու քիչ, հանքագործարանին օտվող տալուց յետոյ տւելի էր պակասել միւս կողմից էլ ժողովուրդն էր աճել. բացի դրանից ապահովութիւն ընկար տարերային պատահարների և քոչուրների տապատակութիւնների կողմից: Դրա համար էլ գիւղական աշխատաւոր ոյժը յոդնած հողի վրայ ապարդիւն ջանք թափելու փոխարէն իրան տւաւ փող վաստակելու հունքագործարանում:

Վարուցանքն էլ աչքից ընկաւ, տնայնագործութիւնն էլ մեռաւ. համեմատաբար հեշտ վաստակած ոսկին հաց էլ էր բերել տալիս և աւելի լաւ հաց, հագուստեղին էլ էր բերել տալիս և աւելի գեղեցիկ հագուստեղին: Ու վարուցանքը մնաց մի քանիսի արտօնութիւն, հարստութեան և հարստահարութեան աղբիւր դառնալով ապագայում:

Եւ այդպէս գիւղացիները սովորեցին հանքագործարանի աշխատանքին ու աղբօւստին, և շիւելով ներս խուժած մարդկային տականքների ու թափթփուկների հետ, սովորեցին վաստակը վատնել գինետներում, սովորեցին շայլութեան ու շուայտութեան, զուրկ մտաւոր մնունդից, զուրկ հոգեկան մխիթարութիւնից:

Հանքագործարանը դարձաւ անհրաժեշտ, խմելը-պահանջ: Գիւղացիութիւնը քայլայւեց:

Իսկ երբ Պարոկաստանի խորքերից չարքաշ ու սակաւապետ բանւորների հոսանք սկսաւ գէպի հանքագործարանը, այն ժամանակ իրերի գրութիւնն էլ փոխւեց, տէրերը անդիւրամերձ և ամբարտաւան դարձան, բանւորի վարձգինն էլ հասաւ նւազագոյնի: Աւելի պակաս վարձով աշխատանք խնդրող գործագուրկ բանւորներով լցւաւ հանքագործարանը: Անբեղուն տնտեսութեան և սակաւահողութեան շնորհիւ չքաւորութեան հասած գիւղացիներն էլ հարկադրւած հնազանդւեցին ամեն նոր կարգադրութեան, որ տեղը ըլկորցնեն: Կառավարիչն էլ նրանց աշխատանքը շահագործելով շնացնում էր տէրերին:

Հիմիկ այդ չնշին վարձն էլ կարում էին թեանից առանց մի իրաւացի պատճառի, և թեանը հնար ու միջոց չունէր բողոքելու այդ անարդարութեան դէմ: Նրան ասում էին. մեր եղը մեր

վարոն են բսում, որովհետև տուգանքներից գոյացած գումարից դեղատուն էր պահուում բանւորների համար, բայց այդ նրա ի՞նչ պարտն էր:

—Մճուճը չի հաճակւում էլի, հառաջեց նա, ու լացը կուլ տալով թերեց գլուխը անագործյն բախտի հարւածների տակ: Նա սարի գլխից ընկել էր տակը և անարգել գլորւում էր դէպի անդունդ:

Նրա հայրն էլ էր բանւոր հանքագործարանում, բայց և այնպէս նա գութանի մաճն էլ չէր բաց թողնում: Ամառը գիւղական աշխատանքով էր զբաղւում, ձմեռը հանքագործարանում: Բայց մի սեռ մթին օր նրա այլանդակւած դիակն են տուն բերում: Ո՞վ էր հարցնողը թէ ում ամփութութեան կամ ագահութեան ու անբարեխդութեան շնորհիւ փչացաւ մարդը: Նրա ձակատագիրն էր այդպէս—պրծաւ գնաց: Բոյսի պէս ծլում են, ածում, բոյսի պէս կարկտահար գլորւում: Մենք մահինն ենք. մեռնողն է պակասում:

Հանքատէրը ամսական հինգ մանէթ թոշակ կապեց նրա այրուն:

Դա մի ողորմութիւնն, մի բարերարութիւն համարւեց: Խելացի այրին իր պաղունցի աշխատանքով ապրելով և իր մինունար որդուն կարգացնել տալով քահանայի մօտ, իր մարդի արշագինը պահում էր անձեռնմխելի և շահեցնում տոկոսով տալով: Մի տասը տարուց յետոյ արնագինը դառնում է գիւղացու համար մի խոշոր գումար: Հանքագործարանի կառավարիչը այդ իմանալով, ընդհատում է թոշակը: Այրին զիմումներ է անում, բայց նըրան հայհոյում են, խոկում, որովհետև նա աղքատ ձևանալով գտում էր անում հանքագործարանից ի զուր ստացած հացագնով: Սարսափելի ժողովուրդ, ապերախտ արարածներ:

Գիւղական պնակալէզ ջղերն էլ կառավարչի աչքին լաւ թւալու համար յանդիմանում են այրուն, որ սա աշքածակութիւնից գիւղի անունը կոտրում էր բարերար օտարականի առաջ ու նրան սրտատում: Էլ ո՞ր երեսով նրանից բարերարութիւն սպասէին:

Այրին իրան մեղապարտ համարելով, մնում է լուս, գեռ վախում էլ է, որ տւածը յետ խլիս: Բայց այնքան լաւ էր, որ թեանը արդէն բան ու գործի հասել էր, ոտի վրայ առետուր էր անում ու փողը շահեցնում:



Ոտի վրայ առևտուր անելով թևանը ծանօթացել էր հանքագործարանում կապալառուների հետ, նրանց տոկոսով փող տւել, նրանց հետ կերպիսում արել: Այդտեղ նրան աւելի էր մօտիկացել կապալառու Եանին, որը միւս մանր կապալառուներին անձար դարձնելու և ասպարէզից հեռացնել տալու համար ուղում էր Թևանի բասկի բերանը փակել տալ նրանց համար, ուստի խորհուրդներ էր տալիս նրան, որ նա ինքը օգտւէր իր դրամակլիք կապալներ վերցնելով, քանց ուրիշներին միջոց տար օգտելու: Բայց Թևանը տակաւին սիրտ չէր անում այդ վտանգաւոր բայն անելու, թէս առաջարկը հրապուրիչ էր հէնց իրան Եանու կենդանի օրինակով:

Եանին անուն հանած կապալառու էր, ձեռներեց, փողատէր, սրտուկ: Երբեմն կարծում էին թէ ահա նա էլ տակով կըլինի շատ ուրիշների պէս, բայց նա միշտ յալթանակով էր դուրս գալիս:

Նա թէս զիր ու հաշիւ չէր գիտում, բայց նրա զիրը նրա յիշողութիւնն էր, նրա հաշիւր — ճարպիկութիւնն ու հոտառութիւնը: Կապալ վերցրած չըլվիրցրած, իսկոյն գնում էր մօտակայ գիւղերը հարկ հաւաքելու ժամանակ և փողի պակաս գիւղացիներին փող առաջարկում, որ հարկնին հատուցանեն ու գնան նրա կապալը կատարելու պարտքի դէմ: Հարկահաններից պրծնելու համար գիւղացին ջուխտ ձեռքով էր ստորագրում մուրհակը, գեռ նրան հիւրասիրում էլ: Իսկ մուրհակը գրւում էր կարճ ժամանակով, տոկոսն էլ հարիւրին քանուչորս վերագիր արած գումարին:

Եւ այդպէս նրա բանւորները նրա պարտականներն էին, ուրոնց ոտը կապում էր, որ չըգնան ուրիշի համար աշխատելու:

Եանին իր բանւորներին ի հարկէ միայն դիւրութիւն տալու համար, կապալը կատարելու տեղերում կրպակներ էր պահում. և բանւորներին հաց, օղի և գարի բաց թողնում: Բանւորը օր ու գիշեր աշխատում էր օձիքը Եանուց թափելու, բայց էլի մնում էր պարտական. իր ստանալիքը միսած էր լինում: Նա եթէ նկատում էլ էր օղու ջրախառն լինելլ, եթէ տեսնում էլ էր՝ որ գարու չափը թերատ էր լինում քիչ միշ, հացի քաշը պակաս՝ միայն իր մտքում էր անիծում Եանուն էլ, նրա օրն ու կեանըն էլ: Բայց որ տեսնում էր այն անիծւած «գաւթարում» մէկին երկու գրած, հարանտարան էր անում, բայց գրւածից դէմ ինչ պիտի անէր. խօ Եանին չէր գրում հաշիւր, այլ մի գիւղացի

վարձովի գրագիր, որը ուրիշի համար հոգին կրակը չէր գցիլ: Բանւորը թէկ գիտում էր, որ այդ փուչ գրագիրները, այդ ապագայ գիւղական տզրուկները, Եանուց պակաս պտուղներ չէին, բայց վերջի վերջոյ լուս էր մտածելով. Էհ, թող մազէ կարմջումը տան, երկաթէ լախտումը տան, մի երկու օր աւելի բան անելով ես մեռնիլ չեմ:

Երբ երկու ձիատէր բանւորը թաւալ էր տալիս պարտքը, Եանին ատակում էր խարդաւանելով էլի մի քիչ դրամ տալ նրան, խիզանի համար ուրախչէք, ճոթ ու կտոր կապել նրա գլուխը ի հաշիւ ապագայ աշխատանքի, ու մուրհակը հազար մի պատրւակով պահում իր մօտ սկ օրւայ համար: Այդպիսի դէպքերում հաշիւը գինեատանն էր տեսնուում: Դինին յարդարող էր, կակղացնող, կասկածներ փարատող: Ու հոսում էր գինին առատութեամբ: Ծախսն էլ ի հարկէ Եանուց չէր դուրս գալիս. եթէ նա փող էր տալիս — ճեռնածիրը փող ստացողինն էր, եթէ բանւորը իր պարտքը վճարած էր լինում — ուրախչէքը պարտքից աղատուղինն էր:

Եւ այսպէս նրա վաստակը բանւորներիցն էր, և ինչքան շատ էին բանւորները, այնքան էլ շատ էր գատումը: Իսկ նրա բանւորները շատ էին ու շատ, որովհետև մի անգամ նրա ցանցն ընկնողը նրա մշտական ճորան էր գատնում, և պարտաւուում միմիկայն նրա բանը կատարելու, հակառակ դէպքում սկ օրւայ համար պահած մուրհակը կը խօսար: Իրա համար էլ Եանին ուրիշների պէս վախ չունէր կապալ կիսակատար մնալուց, երկիւղ չունէր աշխատաւոր ձեռքերի պակասութիւն քաշելուց: Բանւորների աշխատանքի օրն էլ մի քիչ երկարացնելով, աւուրչէքը մի քիչ պակասեցնելով, նա իր բեռը կապում էր լոելեայն:

Այդ մարդն էր Եանին, որ մտերմացել էր Թևանի հետ նրան լաւ կեռիք տալուց, ուսումնասիրելուց յետոյ: Եւ մտերմացել էր երկու նպատակով. առաջինը՝ նրան ծծելու և մրցակիցներին ձեռք բանելում անվնաս կացուցանելու համար, երկրորդ՝ նրա նախշուն կնկանը ձեռք գցելու համար: Թէ Թևանի փողերը, թէ նրա սիրուն ու մատղաշ կինը գարդ էին գառել Եանու համար, բայց տակաւիննա աջողութենի չէր գտնում իր նպատակին համեմ ձեռնարկութիւնների մէջ, Մարեանն էլ պարկեշտ էր ու անմատչելի:

Բայց գուցէ անժամատչելի էր նրա համար, որ աչքը կուշտ էր, պակասութիւն չունէր: Բայց որ Թևանը մձուճի մէջ ընկնէր, մի լաւ խրւէր, աջողութիւնը վրայ կը գար, անառիկ բերդը չէր դիմոնալ յամառ պաշարման: և աջողակ յարձակման:

Այսպէս մտածելուց յետոյ նա վճռեց իբր թէ ընկեր շինել Թևանին իր մի նոր վերցրած կապալում, որ նրան տանից հեռացնէր: Մինչի երեք ամիսը պիտի չորս հարիւր սաժէն փայտ պատրաստէր և յանձնուէր հանքագործարանին:

Մեծ օգուտ կայ, ասեց Եանին, մածուն է՝ թսն չի, ամեն մարդի բան չի: Ամեն մարդի ունի չի այդ կարճ միջոցում կապալը տեղաց անել: Դրա համար էլ լաւ զին եմ կապել—սաժէնը քսանհինգ մանէթ: Մենակ փայտումը, զիրթնայ հացի ու գարու օգուտը, սաժէնին մեռածը հինգ մանէթ դատում կայ:

Զարմացաւ Թևանը և տեսաւ որ 1200 մանէթ դատում կայ: —Հա, պատասխանեց Եանին, որ ժամանակին տեղաց շանուի, 1000 մանէթ գրաւականը կը կորչի: Ես շատ գործ ունեմ, ուզում եմ այդ գործը մի հալալ մարդի տալ: Եկ օգուտը քեզ տամ, աղ ու հացակեր ենք, դատումը կէս կանենք:

Թևանը համաձայնւեց: Ինչու ձեռքից գցել այդ ահազին օգուտը, քանի որ Եանու համար հարիւրաւոր մշակներ կային ամեն ժամանակ պատրաստ:

Եանին նրան վեց հազար մանէթի զանազան մշակ գիւղացիների մուրհակներ յանձնեց և երեք ամսւայ տոկոսը վրան եկած նրանից վերցրեց վեց հազար երեք հարիւր վաթսուն մանէթի մուրհակ:

—Մեռնիլ կայ, ապրիլ կայ, ասեց նա. աչքը արդար լաւ է, բանց միտքը մեղաւոր: Բանդ տեղաց կանես մուրհակդ կըստանաս:

Թևանը գործի կպաւ ամենայն եռանդով: Նա՝ որ տանից հեռացած չէր, շարաթներով էր բացակայում, եկած ժամանակն էլ Եանու հետ կերութում էր անում ի հաշիւ ապագայ դատումի: Բայց Եանին գնալով գնալով գաղազում էր. նա չէր կարողացել անգամ Մարեանի հետ խօսալ երես առ երես: Նրա խոփը բարին էր առել, ու նա յուսավիշել ատամ էր սրում Թևանի վրայ: Իսկ Թևանը առաջւայ պէս շարունակում էր իբ գործը: Բայց նա ոչ Եանու ձարպիկութիւնն ունէր, ոչ հմտութիւնը: Նա կապալառուների դպրոց չէր աւարտել, նրանց կրպակներում հաշւապահ: Գրա-

գիւր չէր եղած, որ իմանար բանւորների մէջքից դատում հանելը, որ իմանար ինքն իրանից էլ գողանալ: Նա մի անաղարտ, գեռ շրփչացած գիւղացի էր, մի երկիւղած մարդ էր:

Գրագիր չը պահելով, ինքը իր գործը տարաւ, բայց չը գողացաւ ոչ հացի քաշումը, ոչ գարու չափումը: Այդ մի տեսակ օտարութի թւաց մշակներին, և սկզբում կարծեցին թէ այդ էլ մի հնարք է: Իսկ յետոյ երբ նրան կեռիք տւին, էլ նրան կապալառուի տեղ չը դրին:

Մշակները նրա վրայ նայում էին ինչպէս իրանց հաւասարի վրայ, և բանը գլխահանուկ էին անում: Ստրուկ մեծացած, սանձի ու մտրակի սովոր, զրկանքներ տեսած, նրանք այլասերւել էին, ու Թևանի բարեկանգութիւնը էին թուլութեան, և ածապարում էին այդ թուլութիւնից օգուտ քաղել ամեն կերպ: Նըրանք եթէ չեն վախում՝ վախեցնում են, եթէ չեն զբնում, իրանք են զբնում: Ինչ իրանց գլխին էին դնում, իրանք էլ ուրիշների գլխին էին դնում: Հիմիկ էլ որ մի խառ կապալառու էր ընկել նրանց ձանկը, նրանք կարծես բոլոր կապալառուների վը ըէժը նրանից էին ուզում հանել ասելով, ինչ այծն ըրաւ թրիմին, թրիմը յետ տւաւ մին-մին:

Թևանը աւելորդ բանւորներ վարձեց և իր ժամանակին չորս հարիւր սաժէն փայտը գարսել տւաւ հանքագործարանի կշտին:

Հանքագործարանի գործակատարը սկսեց փայտի ընդունելը Եանու ներկայութեանը, որովհետեւ գործի տէրը Եանին էլ համարում, և զարսած փայտը չափելով, տասն հինգ տոկոս զեղջեց, առարկելով որ փայտը դիտմածը խաշար էր դարսած: Դրա դէմ Եանին ոչինչ չառարկեց, որովհետեւ նա սովոր էր այդ տեսակ հաշիների, որոնց միջոցով միայն քաղաքակիրթ տէրերը զսպում էին խարդախ տեղացիների ազանութիւնը:

Վաթսուն սաժէն փայտի գին կտրում էին, մինչդեռ Թևանը իրերի զրութիւնը. նրան խկի ճանաչել էլ չէին ուզում: թէ փայտատներին, թէ փայտատներին, թէ կըողներին, թէ դարսողներին:

Ոչ աղազակ, ոչ պաղատանք, ոչ սպանանք չը փոխեցին իրերի զրութիւնը. նրան խկի ճանաչել էլ չէին ուզում:

Նա աշքերն արին կոխած բռնեց Եանու գոտիկից և աղազակեց. խի ես իմ տունը քանդում: Իմ սաժէնը պակաս չի: Թող դարկեց. խի ես իմ տունը քանդում: Իմ սաժէնը պակաս չի: Թող իմհաշւին փայտը նորից սաքեն, ոնց ուզում են սերտ սաքեն:

—Կորիլ ինձանից, գոռաց Եանին, ու պահապահները գործակատարի հրամանով այդ խոռվարարին գուրս քշեցին:

Եանին ստացաւ 340 սաժէնի գինը գրաւականը կորցնելով, սրովհետև կապալը լիովին չէր կատարել:

Թեանը գնաց նրա գուրը կտրեց փողերը պահանջելով, բայց նա գեռ թւանիցն էր պահանջում իր վնասները: Իսկ Թեանին շրջապատել էին խանութպանները, որոնցից նա հազար մանէթի ապառիկ ապրանք էր տարել բանւորների համար. ու պահանջում էին իրանց պարտը:

Թեանը մնացել էր 22մած, իրան կորցրած: Նա ինքը դըել էր ձեռնարկութեան մէջ իր սեփական երկու հազար մանէթը, պարտք էր արել, երեք ամիս չարչարել էր, բայց հիմիկ զըսկում էր այդ բոլորից և գեռ Եանին մուրհակով նրան սպառնում էր:

—Աստւած վկայ, արիւնս վրէդ վայր կածեմ, աղաղակեց սրտած Թեանը. նստիր հաշիւ, թէ չէ մի տուալ արիւնդ նզոված...

Եանին թէ մի քիչ երկիւղ կրելով յուսահատութեան մէջ ընկած մարդից, թէ զիջանելով միջնորդների թախանձանքին, գնաց գինետուն հաշիւ քաշելու:

Այստեղ անգղերի պէս վրայ թափւեցին Թեանի գլխին, որը իր հաշիւն էր բացատրում: Նա հաւատացնում էր, որ վայրտ պատրաստելու համար վճարել է 8900 մանէթ և ուտել խմելի ծախսել է 200 մանէթ, բայց ոչ ոք նրան չէր հաւատում, բոլորն կարծում էին, որ նա շատ փող տակով արած կը լինի:

Եանին մտախոն հաշիւ անելուց յետոյ, բացականչեց. սաժէնը բանանուվեց մանէթ ու կէսից մի զատ պակաս ես նստեցնում: Լաւ վարպետ ես, ես ու իմ Աստւածը:

—Գողղ գողէն գողացաւ, Քրիստոս Աստւած զարմացաւ, նկատեցին ուրիշները:

—Ես գողացել չեմ, պատասխանեց Թեանը, մասն ու մատաղի պէս է իմ հաշիւը. սաժէնը նստել է քսոն երկու մանէթ ու կէս. դէ որ վայտը պակաս չէիր գրիլ տւել, էլի հազար մանէթ դատում կար: Հիմիկ վնասը փարթ անենք մեր գրած գումարին արդնակ, իմ չարչարանքն էլ քեզ հալաւ... ընկեր ենք...

—Ի՞նչ ընկեր, զարմացաւ Եանին. թուղթ ունեմ, վկայ ունեմ... ինձ պլոկել ես, պլոկել: Աշքարէն ասենք—թաքունը քեզ. վայտի դատումը դէն գցածը երկու հազար մանէթ, հացից, գարուց չորս

հարիւր մանէթ, խմիչքից—երկու հարիւր մանէթ: Դէ տներ որ տամ: Քո շնորհիւ հազար մանէթս ետ քաշեցին, որ իր տոկոսով կանի հազար ու վաթսուն մանէթ: Մուրհակով էլ պարտ ես վեց հազար երեք հարիւր վաթսուն: Դիփ կանի տասը հազար քսան մանէթ: Ստացել եմ ութ հազար հինգ հարիւր—դէ բեր իմ հազար հինգ հարիւր քսան մանէթը, որ մուրհակով ետ տամ:

Միջնորդները հաւանութեան նշաններ էին անում, մինչդեռ Թեանը սարսափած իր ծնկներին էր խփում: Նա կորցնում էր առձեռն երկու հազար մանէթը, պարտք ունէր հազար մանէթ, ու էլի պահանջում էին սպառնալով մուրհակով:

—Այս ուղարք ձեր դրանն էլ պիտի չոքիւ, ասեց դաւանութեամբ Թեանը միջնորդներին. խին էք իմ ծուխը կտրում... Ով տէրաւոր, նա զօրաւոր—իմ տէրը Աստւած ըլի:

—Ի՞նչ ես անմեղագունել, սուտ մեռուկ տւել աղւէսի պէս, վրայլրծաւ Եանին. մեզ վարիսեցիութեանով խարիլ չես: Ո՞սց ես մեռել, որ մշակի վարձիցն էլ չըլես խոռած, հացի հաշւիցն էլ ծրուկ արած, մինին երկու էլ գրած: Ադամորդի չեմ: Դէ խօսացնիլ մի լու: հոգի էիր դատում: Հեսց ասենք փայտը պակաս գրեցին

—Քո շունչ ի՞նչ է կատաղում: Ի՞նչ գնում է մշակիցն է գնում: Երկու այդքան էլ դու պիտի էր կտրած մշակներից, որ կշեռը հակակն ընկնէր: Հանքագործարանի դոլը պահենք, թէ նրանց մեզ ապրուստ է տալիս, նրանք մեր հացն են ուտում: Անտառ գլխիլ չի, գիւղը գարդակւիլ չի, մի սաժէնի տեղ երկուսը կարեն էլի... կէս սաժէնը քեզ, կէսը հանքագործարանին, մինև էլ իրան մշակին. նա սովոր է, տանող է, մենք չենք դիմանալ: Տակիս ձին նրան տամ, ետնիցն ընկնեմ հետիւում... ով կը հաւատայ, որ լաւութիւն ես անում: Ի՞նչ ես չըթթվութիւմ...

—Ես ոչ լաւութիւն եմ արել, ոչ զրկողութիւն, պատասխանեց Թեանը խոռվայցից, աշխատելով բացատրել գործը: Բայց նրա ձիգը ապարդիւն էր անցնում, նրան հաւատող չըկար: Նրա ձիգը սարդ ոստային ընկած ճանձի հորձերին էր նման. ամեն շարժման հետ նրան կաշկանդում էր արիւնարբու սարզը իր հիւսւածքի մէջ:

Նա տեսաւ որ ինքը կորած էր, և կորած էր՝ որ չէր կարողացել մշակի մէջքին բեռնելու, որ չէր հասկացել ամեն մրթից մի մազ պոկելով իր համար միքրուք շինել, ու լսեց լքւած, յուս սահատած, ամեն ինչ թողնելով միջնորդների խղճմտանքին:

Միջնորդները երկար շշնջալուց յետոյ ասեցին. մեղքն էլ քեզ, վարձքն էլ քեզ, թեան: Գողացել ես՝ գու ես գիտում, գու զանալ ես տւել՝ գու ես իմանում: Եանին իր կապալը քեզ վրայ ծախած ենք համարում սաժէնին մի մանէթ դատումով. այդ չորս հարիւր մանէթ: Եանու գրաւականը իր տոկոսով հազար վաթ-սուն մանէթ. մուրհակի պարաքդ էլ հետը կանի լոխ օխտը հա-զար ութ հարիւր քսան մանէթ: Եանին քեզ ետ պիտի տալ վաթ-սուն ութ թիւման—պրծաւ գնաց:

—Բա մեր հազարը, աղաղակեցին խանութպանները թեանին մեղք լծելով. ծնիր մեր փողերը:

—Դրան էլ ճար կանենք, հանգարտեցրին միջնորդները. Եա-նի ձեռքին վաթսուն ութ թիւման կայ, նա ձեր պարտքը կը տայ, թեանը նրան կը մնայ երեսուն երկու թիւման պարտական:

Եանին ստքելը տափոխ եկաւ, չէր համաձայնուում, իր մուրհակովը էր սպառնում, միջնորդներին էր երեսպաշտ անսա-նում, որոնց աչքին ինքը փուշ էր դարձել, և ուզում էր հեռա-նալ, բայց նրան նստեցրին և հաշտութիւնը սկսեցին շնորհաւո-րել գինի և օդի խմելով:

Թեանը ընդարմացած ոչինչ չէր հասկանում: Նա միայն ու-շաբերւեց, երբ նրան ասուջարկեցին երեսուն ութ թիւմանի յետ-կար տալ:

—Փողը ե՞րբ պիտի տալ, հարցրեց Եանին:

—Չայ վեց ամիս, պատասխանեցին միջնորդները. մինչև այն իրան կը հաւաքի, գաղածը կը հանի, և սկսեցին հաշել. վեց ամսէն շահը երեք թիւման ութ մանէթ երկու արբասի, զի-նետան ծախս տանհինդ մանէթ—այդ էլ Եանին կը տայ, դու մի մարդ ճանաչիր, թղթին մի մանէթ, տանուտէրին երկու մա-նէթ, որ կանի երեսուն օխտը թիւման վեց մանէթ երկու արբասի:

Թեանը կալուկապ տեաւ պահանջած յետկարը և ստանալով իր մուրհակը պատառուեց, կոխճրտեց ու դուրս ընկաւ: Աշխարհը մթնել էր նրա գլխին, նա խեղդւում էր:

—Փուլ գաս դու, փուլ, աղաղակեց նա բսունցըով սպառ-նալով դէպի հանքագործարանի գրասենեակը. ինձ էլ ծծեցիր, կշտացմբ—անկշտում վիշապ... կաթկթոցից գոհ չէի, հեղեղ էր ուզում... բրիշակ գառնաս դու... թւր գնամ ես...

էլ մուր պիտի գնար: Նրա քայլերը բնազդմամբ ուղղւեցին

դէպի տուն: Նա յանկարծ իրանց տան շէմքումը տեսաւ իրան: Բայց հէնց տուն մտաւ թէ չէ, փղձկաց ու սկսեց երեխայի պէս հեկեկալ:

Շիւանով ընկած Մարեանը մնացել էր սպառած. Նա արգէն իրազեկ էր եղելութեանը: Ու նրան թւաց, որ եանին վրէժ էր հանում թեանից իր ամօթապարտ մնալու համար: Ու նա տանջ-առում էր այդ մտքից, որ իր պատճառով խեղդւում էր մարդը: Ու մէկ սրտապնդում էր ասել թեանին Եանու հետապնդումների մասին, մէկ էլ բրանսին հուպ էր տալիս: Կրակի վրայ իւղ ածէր: Ի՞նչ արիւնհեղութիւն կ'ընկնի, ինքն էլ զրոյցի առարկայ կը դառ-նայ: Մարգիկ այլ կերպ կը մեկնէին հանգամանքը:

—Չէ, թող տեղին արգնակ մեռնի, վճռեց նա. ո՞վ կը հաւա-տայ, որ նրան թեթ եմ արել: Ու այդ մասին ոչինչ չասեց թեա-նին ու մտքումը մեղայ եկաւ Աստծուն մարգից բան թաքցնելու համար:

Թեանը գաղաղած էր, նրա ձեռքը բան չէր բռնում, նբա-խելքը բան չէր կարում: Նա սկսեց խմել, դարդախում տալ, ու կամաց կամաց սկսեց ծախել ձին էլ, տաւարիցն էլ, տնամէջիցն էլ գիշեր ցերեկ գինետանը վայր ընկած: Մարեանը լուռ արտաս-ռում էր, բայց սիրտ չէր անում մարգին յանդիմանելու, չէր խի-գախում նրան նախատելու: Նա սովոր էր անմոռնչ հնազանդու-թեան, բայց նա տեսնում էր իր շէն տան կործանումը և ինքն իրան մորմորում, նա տեսնում էր իր մարդի անկումը և ինքն իրան տանչւում, սրբերին աղօթք անում:

Մի օր էլ թեանը հարբած վերադարձաւ, հիւանդացաւ, մի քանի օր մնաց անկունում: Մարեանը նստած նրա սնարգում, սիրող մօր պէս նրան խնամում էր, հսկում նրա վրայ գիշերցեցե-րեկ շինած, գուրգուրում, խրախուսում նրան: Թեանը խելքը տուն տւաւ, լացեց, շատ լացեց, ու սիրալ հանգստացաւ: Նա իր երե-խաներին փայփայեց, իր կնկայ հետ խօսաց վաղւան պէս՝ ան-ասելի ցնծութեամբ լցնելով նրա կուչ եկած սիրալ:

Ու սկսեցին մարդ ու կնիկ իրար հետ խօսակցել ընկերա-բար, խելք խելքի տւին, խորհրդակցեցին, ու Եանուց պըճնելու համար մնացած տաւարն էլ ծախեցին, որից գոյացաւ երեք հա-րիւր մանէթ: Այդ փողն էլ տւին Եանուն պարտքի մէջը կոտրե-

լու համար, յետկարը փախեցին էլի վեց ամսով, ու մնացին դատարկ, վկներին էլ պարտք ութիւն թիւման:

Մի քանի ժամանակ էլ Թեւանը շուռ եկաւ պարապ-սաբաս, հագի շորն էլ մաշեց, տաշտի հացն էլ զլիեց: էլ նրան ձեռք մեկնող չկար, նրա քարին քռնչող չըկար, նրան մարդի տեղ դնող չըկար: Արհամարւած, լրւած, անօգնական նա տառապում էր, ծիւրում:

— Խի ես մեզ կոտորում, ասեց նրան Մարեանը. ունքամէջդ բաց, որ ձեռդ զան բռնի, բարին վրայ գայ: Լաւ օրին լայն ենք ապրել, վատ օրին էլ նեղ կապրենք, մեղով կապրենք: Ուրախ դէմքիդ ես կարօտ:

— Ծափ տանք, պար գանք, քեզ մատաղ, պատասխանեց Թեւանը մեղմութեամբ. բա խիզանը հաց են ուզում, հաց: Մուրացկանութիւն անեմ. տափը կըմտնեմ, արհեստ չեմ գիտում՝ զլուխըս պահեմ, շնորք չունեմ՝ գողութիւն անեմ, փող էլ չունեմ տէրտէր դառնամ գիւղն ընկնեմ:

— Զեռքեր ունես, ասեց Մարեանը նրա ձեռքերը բռնելով. սրանց երախտիքին մատաղ:

Թեւանը թառանչ քաշեց: Նա պիտի գնար հասարակ բանուրի գործ կատարէր, նա՝ որ շատ բանուրներ էր ունեցած:

— Յո արդար քրտնքով ձեռք բերած չոր հացը անուշ կըլինի բանց մեղր ու կարագ, թախանձեց Մուրեանը: Ի՞նչ տւաւ երկինքը՝ որ երկիրը չընդունի: Մեր լաշին թքող չի ըլիլ—թող հէ թըշնամին ճարի: Ես էլ քեզ հարակաշկուռ կուան տւած մեր տունը կը պահենք լաւ-օսալ: Ես ազա, դու ազա, բա մեր աղուն ժվ կազայ:

— Բզորդ որ, համաձայնեց Թեւանը. զարդակահպարտ մարդը ինչմէ պէսաք: Գողութիւն չեմ արել որ ամաչեմ, շնութիւն չեմ արել, որ սեերես դառնամ: Աստծոյ անունը տամ, գնամ մշակութիւն անեմ:

Ու Թեւանը բանուր գրւեց հանքագործարանում, որ իր արիւն քրտինքով տունն էլ պահէր, պարաքն էլ տար, ու գարձաւ մի սովորական մաէ մեքենայ հանքագործարանում, որ իր ոյժը շահագործել տար...

Գ.

Ցերեկւայ բանուրները ազատւեցին ու նրանց տեղը բռնեցին գիշերւայ բանուրները:

Կամաց կամաց մութը պատում էր, օդը խոնաւանում: Ծու-

խը նստում էր, սաւանի պէս ծածկում գետինը: Մեքենաների դըղդիւնը մի խուլ մռնչոցի էր նմանում և այդ մռնչոցին արձադանք տալով ձորերը հառաջում էին: Բովերից հրային լեզուներ էին գուրս սահում, հալոցներից ծորւող հրահոսան, ջուռութը լուսաւորում էր գործարանի ունջակալած պատերը և մրաթաթախ բանուրների երեսները բոսորային լրյուսով: Ծծմբային կծու հոտով և գոլորշիով տոգորւած գաղջ օդը աւելի էր մղձուկ զառնում:

Այդ բոլորը միասին կարծես ներկայացնում էր դժոխքի տեսլացոյցը իր գեհենով, իր տանջանքների բովերով ու հնոցներով, իր զոհերի հառաջանքներով:

Եւ այդ դժոխքի մէջ վիտում էին հացի կարօտ բանուրները, նոյնպէս տնքալով, նոյնպէս հառաջելով ու գալարւելով:

Այդ թշւառներից մէկն էր և Թեւանը. նա իր մեղքը քաւում էր: Տուգանքից ազատւելու համար նա պիտի գիշերն էլ բանէր գիշերւայ բանուրների հետ հաւասար:

Ժամերը թուզում էին, նրա խոնջացած մարմինը հանգիստ էր պահանջում, բայց նա իրաւունք չունէր հանգստանալու: Իր տանջանքով նա իր երեխաների խլած հացագինը պիտի յետ ստանար, իր երեխաների, որոնք հիմիկ տատրակների պէս իրանց մօր գրկում անուշ անուշ քնած կը լինէին առանց իմանալու թէինչ վիշա ու տառապանքի մէջ է իրանց հայրը: Բայց այդ բոլոր վիշա ու սրտամաշ տանջանքը կըշբանային շղոմքոր ոսկու փայտայանքներից, ամեն վէրք ու խոցւած կըրուժւէր Ոսկանի անմեղ ժամանակից: Ոսկին հինգ տարեկան աղջիկն էր, Ոսկանը երեք տարեկան տղան, Անունները ոսկի՝ իրանք սոված. այդ էլ բախտի հեղնանք էր: Ի՞նչ էր սպասում ապագայում նրանց. միթէ նրանք էլ պիտի մատնէին ստրկութեան: Այդ ինչու ինքն էլ մի աւազակ չէր որ գերփէր, կեղեքէր, որ հարուստից խլէր նրա հարուստութիւնը: Այն ժամանակ ոչ երեխաները կարօտութիւն կըքաշէին, ոչ Մարեանը ուրիշի համար բան կանէր: Էլ անխիղճ եանին չէր հարստահարիլ նրան, էլ նրա աշխատավարձը չէին խլիլ անիրաւաբար, էլ զոռող վերակացուները նրան չէին վզնկիլ, հարւածիլ: Ալի, այդ օձերին ի՞նչ կըտրոքէր, այդ օձերին, որոնց չքմեղ ձևանող ուշեգիները հիս էին արել բանուրների լաշին, այդ օձերին, որոնց շնորհիւ նա պիտի զուրկ մնար իր սիրելիների գգւանքից և հանգիստ անկողնուց:

Այսպէս մտածելով նա յենւեց թիու կոթին, ու քունը վրայ կոխեց: Այնքան լաւ էր, որ մենակ էր բանում մի ջոհարի թեղի վրայ: Բայց գեռ քնած-չըրնած նա ցնցւեց խուճապած, մէկը նրա ձեռքը բռնել էր: Մի գուցէ հիմիկ էլ գիշերայ վերակացուներից մէկն է, ու նա նորից պիտի ենթարկւէր տուզանքի, պատժի: Մի վայրկեանի մէջ սոսկումից ու զարհուրանքից ընդարմացաւ նա, անդամալուծւեց, բայց բովերի բոցը գեր փրփաց ու նա ճանաչեց իր կնոջը:

—Մարեան, հազիւ լսելի ձայնով հծածաց նա ու մնաց պշնած ու բերանքաց: Իր աչքերին չէր հաւատում, տեսիւք էր կարծում իր առջև:

—Ես եմ, գլխովդ ման տամ, պատասխանեց Մարեանը կամացուկ:

—Դժու ես՝ թէ քո շղավանքը, երազումս եմ՝ թէ բըգեօջի, շշնաց թևանը աչքերը հաղաղելով:

—Ես եմ, ես, պատասխանեց գորովանքով Մարեանը. խիզանին ընով ըրի, դէսը ծորկւեցի: Լսել էի որ պահել են.

—Այս, հառաչեց թևանը. կաշւահան եղայ արկի գլոցում, կրակի պլալոցում, ու խլեցին բերանիս պատառը:

Թևանի սիրաը տրաբում էր, ու նա յանկարծ հեկեկաց: Մարեանը նոյնպէս հեկեկարով փարեց նրան: Նրանց հառաչանքները և արցունքը միախառնւեցին, որ գնան խառնւեն այն ծով արտասոնքներին, որոնցով հունցւում է հզօրների փառահեղ շինութեան շաղախը:

—Դէ մի քիչ հանգիստ առ, դու ուժատւել ես, թախանձում էր Մարեանը: Ես պահնակ կը կանգնեմ—մօտիկ էլ մարդ չը կայ:

—Օրհնւի քո ծնունդը, պատասխանեց թևանը խանդապատած ու յօրանջելով թոյլ թոյլ տեղը նստեց ու մեկնեց գետնին:

Մարեանը մի քիչ կանգնեց լուս ու մունջ, պատի շւաքից ծկրակեց, ու շուրջը կասկածելի ոչինչ չընկատելով, վերցրեց մարդի թին ու սկսաւ շարունակել նրա աշխատանքը:

—Հէյ Տնհա-Սուրբ-Մարգիս, կանչեց նա երեսին խաչ քաշելով. դու հէնց անես, որ թևանը աչքը բաց անի այս թեղը մաշած տեսնայ...

Ու սկսաւ աշխատանքը: Կամաց կամաց նա տաքանում էր և աւելի թափով ու սրտալի թի տալիս:

Ու երեսութացան նրա աչքի առաջ անցեալի պատկերներ: Նա յիշեց իր մանկութիւնը, երբ թիով տանիքի ձիւնն էր քերում ու թին սահնակ շինած սղդում ձիւնի վրայ: Յիշեց ձիւնէ կոլուակի տալը, տիկնի տալը, աղջիկ գառնալը: Ու անցեալը յարութիւն առաւ կենդանի պատկերներով, որոնք մէկը միւսին յաջորդելով անցնում էին խուռներամ:

Նրա կիանքը ոչնչով չէր զանազանուում ուրիշ գեղձկունիների կեանքից: Զանազանութիւնը գուցէ միայն այն էր, որ նա մեծ ընտանիքի մէջ մի հատ աղջիկ լինելով, շատ էլ չէին վապում նրան ճանպայ դնելու: Նա վեց եղբօր ուսկապ պիտի ուորէր, վեց հարսի տալ պիտի դառնար:

Նա սիրուն էր նրան մատով էին նշանց տալիս: Նա դիւրեկան էր, հեզահամբոյր:

Նրա մասին ասում էին. աղատով է (գրաւիչ), աստղով է ու վրան ձագ էին տալիս:

Շատերն էին նրա ետնիցն ընկնում, մօտ մօտ անում, հետափարում, շատերն էին վարդավառին նրա հետ գոմիի տալիս, շատ մայրեր ինսամխօսներ ուղարկեցին նրա մօր կուշտը, բայց նրան տւին թևանին,

Սյոյ մի թիշ ստարուտի էր ինսդրակների աչքում, որովհետև նրան ուղղողները աւելի լաւ օջախից էին:

Լաւ օջաղ ասելով հասկացում էր շէն, բազմանդամ գերդաստան, ուրեմն և գեղամիջում ոյժի տէր: Առածն էլ էր այդ հաստատում. վեր թռաւ տղատէրը, վայր պըրծաւ փողատէրը, Այդ տեսակ գերդաստանի անդամի մէջքը պինդ է լինում, լեզուն՝ կըտրուկ, խօսըր՝ անցուկ: Խսկ թևանը մի խեղճ այրու որդի էր: Դըրա համար էլ մերժում ստացածները զանազան առասպէլներ հընարեցին նրանց սիրահարութեան մասին, տաղեր յօրինեցին, հընչակելով թէ իրը սկասիրտ ծնողները խայտառակութիւնից աղատւելու համար են ստիպւած եղել սեերես աղջկանը թևանի վզին կապել: Բայց Աստւած էլ էր վկայ, որ Մարեանը պարզերես էր և թևանը խոհեմ: Նրանք սիրում էին իրար մաքուր, խանդակաթ սիրով, նրանց ծնողներն էլ զգաւշաւոր հսկողութեամբ նովանաւորում էին նրանց սէրը, որովհետև Մարեանը անուն էր արտած թևանին: Այդ անուն անելը թէ եւ տունըստունայ էր, բայց

որովհետև գերդաստանի գլխի կամքն էր այդ, ուստի դրա դէմ մտածել անգամ էր կարելի, ուր մնաց խօսալ:

Հայրը սրբագործւած իրաւունք ունէր իր զաւակի բախտը տնօրինելու: Եւ նա հաւանել էր թևանին, որովհետև թևանը բաջութիւն էր ունեցել գայլերից մէն մենակ թափելու նրանց մի մատաղացու երինջ: Նա էլ հանդիսաւոր խոստում էր արել իր աղջկանը տալ թեանին:

Այդ ժամանակ Մարեանը տասնչորս տարեկան էր, առողջ, գլարթ, ուշիմ, փարփառ: Նա լսեց հօր խոստումը և շիկնած փափառ տուն պրծաւ: Փախաւ, որովհետև այն տակաւին անյայտ տէրը, բախտի ընտրւածը, արդէն հրապարակ էր դուրս եկել:

Նա իմանում էր, որ ինքը պահելաւոն չէր, նա գիտում էր, որ մի օր մէկը նրան տէր պիտի կանգնէր, բայց և այնպէս նրա կուսական սրտի մէջ մի ցանկութիւն էր յղացել. որ այդ տէրը լաւը լինէր: Եթէ լաւն էլ չըլինէր, նա անխօս կըտանէր իր իմաչը, բայց և այնպէս Աստծոյ շէն օջաղից ի՞նչ կըպակասէր, որ ընտրեալ լաւը լինէր:

Ըստրեալը թեանն էր, մի որք տղայ, կարդացած, տիրացու:

Մարեանը տեսած էր թեանին հէնց այնպէս, ինչպէս շատ շատերին էր տեսած, բայց նրա վրայ չէր նայած ինչպէս իր փեսացը վրայ, ուստի սրտատրով, շունչը փորը զցած, դռան ճաքից ծկրակում էր, և գնորդի հայեացքով անտղելով նրան, տեսաւ որ նա բարձրահասակ էր, նիհար, աչեղ, ընչացքը ծրած: Ու երկար նայում էր նրան յափշտակւած, հեռում, ժպտում: Թեանը դիւր էր եկել նրան և նա հոգեզմայլութեան մէջ հծծաց. արիւնս քուաց վրէն:

Այդ օրից յիտոյ թեանը գալիս էր նրանց տուն ապօր բացակայութեան ժամանակ և նանի հովանաւորութեան տակ տեսակցում Մարեանի հետ, միրգ ու քաղցրաւենիք բերում նրա համար:

Մարեանը սկզբում բաշւում էր, խպնում, յիտոյ սովորեց նրան, սկսեց անխօս հիացմամբ նայել նրա վրայ, ակնդէտ սպասել նրա զալուն, ցնծում էր նրան տեսնելով, թրթում, ու սիրում նրան:

Ժամանակի ընթացքում սիրոյ կայծը նրա մանկական սըրտում հրդեհի փոխեց ու սիրածին սիրածի գիրկը զցեց:

Ու երկիրը դրախտ երկաց երկուսին էլ, կեանքը մի անվերջ երջանկութիւն:

Ինչպէս հարսանիք արին, ինչ տւայր առան, ինչ բաժինը տւին, նա չէր իմանում, ինչպէս նրան տարան, ով խոնչայ գուրս բերաւ— նա չէր յիշում. նա զանդրուկի տակից թևանին էր տեսնում, որը թագը գլխին, ուսկապը կրծքին, մոմը ձեռքին ծանրամիծ առաջ էր գնում մակարներով շրջապատւած:

Մօրից հրաժարւելիս, հայրական տանը հրաժեշտը տալիս նա լացաւ, բայց նա լացաւ երջանկութեան զեղումից: Նա միայն այսքան էր գիտում, որ արդէն թևանին էր զարձել, իր թագ ու պատկ, մէր ու պարծանք թևանինը, որի ուրախութեանը ուրախակից յար և անբաժան: Խակից պիտի լինէր, տրտմութեանը տիրակից յար և անբաժան:

Մերձաւորները նրան երեստեսնում էլ ընծայեցին, բերանքացուկ էլ տւին, որը երինջ, որը ոչխար նրա դաշտային անտեսութեան հիմքը դնելով:

Նա զիզի հարս դարձաւ, նա տնարար կնիկ դարձաւ: Սկիսուրը նրա արեսով էր երգում ուտում, մարդը նրա շողքին թուրածում: Հարեանները նրան գովում էին, ազգականները գովասանում, մայրը պարծենում իր հալալ ծծկեր զաւակով: Նա պարկեց էր, ժրաջան, աշխոյժ և անպահուստ նւիրւած իր մարդին, կեշտ էր, ժրաջան, աշխոյժ և անպահուստ նւիրւած իր մարդին, որի ամեն մի ցանկութիւն գուշակում էր առանց խօսքի էլ:

Եօթը տարի էր մարդի գնացած, և գեռ ոչ մի անգամ մարդ տեղիք չէր ունեցել նեղանալու նրանից, բարկանալու նրա դը անդիք անդիք չէր ունեցել նեղանալու նրանից, բարկանալու նրանից կուռ բարձրացնելու: Նրանք ապրում էին խավրայ, ուր մնաց կուռ բարձրացնելու: Նրանք ապրում էին խավրայ և անվրդով, կաթն ու կորեկի պէս: Եւ Աստւած օրհնեց նրանց տունը, նրանց մի աղջիկ և մի տղայ տալով: Ուսկին ու Ռուսաց տունը, նրանց մի աղջիկ և մի տղայ տալով: Ուսկին ու Ռուսաց թուների պէս ճռողում էին, ծլվում, նանի սիրտը անկանը թուների պէս ճռողում էին, ծլվում, նանի սիրտը անկանը բերկութեամբ լցնում:

Առաջին տրտմութիւնը՝ որ նրանց տուն մտաւ՝ այն ժամանակ էր, երբ բազմերախտ նանը մեռաւ: Կարծես նանն էր նրանց նակ էր, երբ բազմերախտ նանը մեռաւ: Կարծես նանն էր նրանց երջանկութեան և խաղաղութեան պահպանիչը: Այդ պահպանիչը երջանկութեան և իստութեան անփոյթ բնակարանը դարձաւ չքանալուց յիտոյ նրանց երբեմնի անփոյթ բնակարանը դարձաւ ժամանակութեան: Տրտմութեան ըոյն: Զախորդութիւնը հետեւց ձախորդութեան: Նրանց կեղեքեցին չար մարդիկ, նրանց պլոկեց գրողի տարած դե եանին... պլոկեց սիրտն այրելուց, որ նրան չը կարաց

Ճանկել... Վայ վայ, նա ի՞ւչ ծիծ էր ծծել, որ բարձը փոխէր: Ի՞ք Թևանը բոլորիցն էլ լաւ էր, բոլորիցն էլ գերազանց:

Ու Մարեանը խանդաղատանքով նայեց դէպի Թևանը՝ ճառ կատը բաց, շրթունքներին մեղմ ժպիտ, բայց սոսկումով ցընցաւեց. իրա առջև կանգնած էր զարգանդ գիշերապահ՝ վերակացունք նա հէնց էր երէ տեսած վազր:

Բովերի բողը լուսաւորել էր շուրջը:

Մարեանը լաչակը յետ գցած, երկար ծամերը ուսերն ի վայր ծածան, ճկուն ու նրբակազմ, հրապուրիչ էր ինչպէս մի գիշերայ յուշկապարիկ: Ու վերակացուն վրայ թռաւ նրան բոնելուն

Մարեանը ճչաց, հրեց նրան ու ժգին, ու համարեա թէ Թևանի գլխին ընկաւ: Կատաղած վերակացուն յարձակւեց՝ չանթեց նրան, բայց նոյն վայրկեանին Թևանը վեր թռաւ, ու քաջալերւած Մարեանը բուռնցքով խփեց վերակացուի աչքունքին, դուրս պրծնելով նրա ճանկից:

— Գողերը, գողերը, պահապան, գոռաց վերակացուն:

Ահաբեկւած Մարեանն ու Թևանը՝ ձեռք ձեռքի տռած մազապուրծ փախան այդ տեղից և հերին հասան իրանց տուն մի ճնշում: Ու նրանց ետեկից հանքագործարանը սոված գազանի պէտ մոնչում էր բոց ու գոլորշի ժայթքելով: Նրա մոնչորից հառաշում էին ձորերը, գողգողում գետինը, ու սարսուռ գցում սարսափահար փախստականների սիրաբ:

— Գողերը, գողերը—դեռ թնդում էին նրանց ականջումք: Կարծես քար ու ծառ աղաղակում էին նրանց ետնից, կարծես բովերի բոցը լուսաւորում էր բոսորային լոյսով նրանց հետքը:

Ու նրանք շնչասպառ փակւեցին իրանց իրմիթում, մնացին կողքի կողքի կանգնած:

— Հիմիկ որ մեր տունը քանդւեց, շնչաց Թևանը: Խպանումը կոխեց մեղը Փալացուկին ճար չը կայ...

Մարեանը ոչինչ չը պատասխանեց. նա շշմել էր կարծես թէ:

— Ինչ կըլի՝ կըլի, ասեց Թևանը քիչ ժամանակից յետոյ աւելի սրտապնդած:

— Գիշերւայ չարը—առաւօտեան բարին, պատասխանեց կամացուկ Մարեանը, ինքն էլ չը հաւատալով իր ասածին:

— Զէ, այդ մեզ չի մնալ, կարեց նրան Թևանը. գիշերը ծանդրած է:

Այս, գիշերը յդի էր. ի՞նչ պիտի ծնէր առաւօտեան:

Սարսուռ էր անցնում Մարեանի մարմնով և նա աւելի ամուր էր կպչում մարդին: Նա էլ էր իմանում, որ ամենաթիթէ բողոքը ըմբռասառութիւն էր համարելում և պատժելում, ուստի իրանց արածը ապստամբութիւն պիտի համարէր և ուրիշներին խրատալու համար պատժէր, և այն էլ ինչ աեսակ պատժէր:

— Քեզ չի ձեռք տան, ես գլուխ բարը, ասում էր Թևանը:

— Բա ինձ համար քի՞զ պատժեն, հարցնում էր լացակումաց Մարեանը:

— Որ լաշս դաղեն՝ կառողանայ, որ սիրաս գաղեն, էլ նա լաւ չի գառնալ, պատասխանում էր Թևանը, և կարծելով որ վերակացուն Մարեանի անունը տած չէր լինիլ ձշմարտութիւնը քօղարկելու համար, պատփրում էր կնկանը լսել, ոչինչ չըյայմնել:

— Դու չըմգիդալդ գիր, տեմնանք որտեղ է պատկ անում:

Մարեանը լուռ լսում էր մարգի պատւէրը, ամեն չըխկոցից զարգանդում, աչքը դռանը գցում, հառաչում:

Մինչ այս մինչ այն՝ տագնապալից գիշերն անցաւ, արշալոյս ծագեց, ու յանկարծ մի խումբ սպառագէն ձիւուրներ որոտընդուստ արշաւելով շրջապատեցին անզէն, անօդնական Թևանի խրճիթը:

Թևանը դուրս եկաւ՝ անխօս կանգնեց նրանց առջեւ:

Նրան պրկեցին հայոցելով ու ապտակելով, բայց նրա խուփ բերանից մի հառաջանք չըփրթաց, նրա կանգնած աչքերից մի կաթիլ արտասուր չըծորաց: Նա կարծեսքարացել էր և ցաւ զգալու ընդունակութիւնը կորցրել: Բայց նրա ցաւը զգում էր Մարեանը և անխօս մորմորում:

Հաւաքւած ամբոխի անզօր կարեկցութիւնը չէր թեթեացնում կալանաւորի տանջանքը, այլ աւելի էր ծանրացնում նրա դրութիւնը: Ոչ ոք սիրա չէր անում միջամտել առանց կաշառքի, ուստի ուրեակնիկը իր իշխանութեան հմայքը անսասան պահելու համարիլ մարակի ոյժն էր ցոյց տալիս կապւած կալանաւորի վրայ:

Մարեանը մնացել էր շիւանի մէջ: Մի կողմից մարգի պատւէրն էր նրան խեղում, միւս կողմից տանջանքը: Եթէ մարգի պատւէրն էր կատարում, սիրան էր փշուր գալիս, եթէ բերան բանար եղելութեան մասին, պատփրազանց կըդանարար: Եւ այս պէտ երկու կրակի մէջ մնացել էր կալուկապ, անխօս, անշարժ, և արտասուրքը նրա ծով աչքերից հոսում էր՝ հոսում թշերնիվայր:

Երբ կալանաւորին ձիպոտ տալով թշեցին գէպի հանքագործարանը, գիւղի կնանիքը հաւաքւեցին Մարեանի գլխին հարց ու փորձ անելու, բայց Մարեանը ոչինչ չէր պատասխանում՝ այլ շարունակ հեկեկում էր:

— Բարը ծով է ընկել տնաքանդի, փափսում էին նրանք ու կամաց կամաց քաշում՝ հեռանում:

Մարեանը մնաց իր ցաւերի հետ մենակ: Նա երկար երկար

նայում էր դէպի հանքագործարանը ու նրան երեսլթանում էր պատժարանը, սոսկում յարուցանելով նրա մէջ: Գուցէ այդպէս մնար կանգնած արձանի նման, եթէ զարթնած երեխաների ճիշտ չուշարերէր նրան, և նրան տուն մտնել չըտար: Բայց ինչ զարդ զանդ էր դարձել թափուր տունը: Հէնց էր մեռելատուն: Ո՞ւմ էր անատէրը: Էլ ում նա ամեն երեկոյ կըսպասէր ակնդէս, ում ծէտատէրը: Էլ ում նա ամեն երեկոյ կըսպասէր պուռը բաց կը ծէգին ճանպայ կըդնէր սրտարոփ: Էլ ով նրա դուռը բաց կանէր—փակւի ղուռ փակիլ տւողի դուռը...

Թեան, Թեան, համարեա ճաշց սրտմտած կինը ինըն իր ամայից սարսափերով, բայց Թեանի տեղ վեր թուած աղջիկը փաթթւեց նրան:

Խեղա աղջիկ, հծծաց Մարեանը. դու էլ սիրուն ես: Միթէ դու էլ պիտի քարքար գաս: Եւ ո՞ւ մեղքի համար...

Ու անիծեց նա իր գեղեցկութիւնն էլ, թարմութիւնն էլ, մատղաշութիւնն էլ: Այդ գեղեցկութիւնը նրա համար չարիք էր դարձել:

Իես շատ վաղ նրա տատը նրանով սքանչանարով, պատմում էր այն սարսափելի ժամանակների մասին, երբ գեղեցկութիւնը պատուհաս էր համարւում գերգասատանի համար, և պատուհասից զերծանելու համար ստիպւած էին լինում այլանդակել գեղեցկութիւնը զանազան միջոցներով: Հիմիկ թէկ հանգամանքները փոխւել էին, բայց փորձանքը կար ու կար անպակաս գեղեցիկ կնկայ համար: Արդ եթէ նա տպել իինէր, եանին էլ չէր հրապարւիլ նրանով, գերակացուն էլ չէր կատաղիլ, Թեանն էլ չէր փորձանքի մէջ ընկնիլ:

Ու նա ուզում էր պրակել իր երեսը, փետել իր մազերը...

Դ.

Անցաւ չար օրը, երեկոն վրակոխեց. իսկ Մարեանը կարդեալ վառելու կարիք չէր զգում: Ո՞ւմ համար գառէր: Նա ծրագ վառելու կարիք չէր զգում: Իսկ նամար գառէր: Նա կծկել էր օջաղի ծխրտող կրակի մօտ, իսկ նրա փոքրիկները կծկել էին, սիրունիկ գլուխները նրա ծնկներին դրած: արդէն քնել էին, սիրունիկ գլուխները նրա ծնկներին դրած:

Ամեն երեկոյ այս ժամանակ կրակը պլալում էր, մարդ ու կնիկ նստած մի կտոր հաց էին ուտում, իրանց ցաւերից խօսում:

Բայց հիմիկ մարդի տեղը թափուր էր:

Մարեանի սիրութ լցւաւ ունանւագեց ախրագին մեղմ ձայնով.

Ամպել է՝ թոռ չի գալիս,

Մթնել է՝ տուն չի գալիս,

Անտէր մնայ էս բարձը—

Առանց եար բուն չի գալիս...

Ու յանկարծ դուռը ճուաց և Թեանի կամացուկ բարի երեկոյ տալը շոյեց նրա լսողութիւնը:

Մարեանը մի րոպէ սառաւ կապւածի պէս: Բայց երբ Թեանը

մօտեցաւ ու կրակի լոյսը նրա վրայ ընկաւ, Մարեանի սիրաբ սկսեց արագօրէն բարախել, շունչը կոկորդում կալարեց ու նա փուեց մարդի ոտների տակ:

— Երեսս ոտիդ տակը, հեծկլտաց նա:

Երեխաները քնաթարժած աղաղակ բարձրացրէն: Թեանը գրկեց երեխաներին, նստեց. Մարեանը կճեց նրա մօտ: Նրա լարւած ջղերը թուլացան, ու նա ձեռքերը երեսին դրած սկսեց հեկեկալ:

— Տաղ արա, երեխէրը խեղճ են, ասեց Թեանը մեղմօրէն:

Մարեանը իրան հաւաքեց, խոր թառանչ քաշելով վեր կացաւ ձրագ վառեց. կրակը թեժացրէց, զուր գրաւ մարդի ոտները ըստ սովորութեան լւանալու, գէս ու գէն ընկաւ ընթրիք պատրաստելու: Այդ ժամանակ նա սարսափելով նկատեց մարդի ձեռքերի վրայ արին: Նա աչքերը չոեց մարդի վրայ, բայց մարդի կինոն էլ էր արիւնլուկի: Նրան տանջիկ էին, յօշոտել: Մարեանի սիրտը մզկտաց կակիծից:

— Մը իւն տայ քեզ արիւնլուկ անողը, հառաչեց նա, վեր կացաւ արիւնը սրբեց և արտասունքով լացաւ նրա գանակոծած ուսերն ու թիկունքը: Յետոյ իր բոլոր կարողութիւն կազմող երեք հաւից մինը մորթեց, խաշեց, խոնչայ գրաւ, հաց գցեց ու գեղ ու գարմանի համար պահած մի սրւակ օղին էլ զուրս բերաւ: Թեանը շարժեց գլուխը և մի գաճան քմծիծաղ տալով շնչաց. հաի լեզն է...

Ետի լեզն էր, խեղգուղի վերջին լողը, կարապի վերջին երգը: Ու նրանք իրանց ունեցած չունեցածը գուրս էին բերել կարծես իրանց կործանումը տօնելու, մի վերջին անգամ կուշտ հաց ուտելու իրանց երեխաների հետ: Էլ էզգէն յօյս չըկար:

Թեանին տանջելուց՝ յօշուելուց յետոյ, ամբողջ օրը սոված ծարաւ կապած պահելուց յետոյ, արձակել էին մի անգամ ընդ միշտ գնանկելով հանքագործարանից:

Այդ էլ մեծ ողորմութիւն էր, որ ամենակարող կառավարիչը նրա հոգին հանել չէր տւել տանջանքի ու կտտանքի մէջ: Բայց ձուկը ջրից հանած—կամ սպանած—այդպէս էլ Թեանն էր: Նրան գոնդելով, միանգամայն զրկել էին այն մի կտոր հացից, որը նա ձեռք էր բերում իր աշխատանքով: Նա էլ իրաւունք չունէր հանքագործարանում երեալու:

Բայց զիւղում էլ գործ չըկար, մի կտոր հաց տեղ գործ: Համարեա բոլորն էլ աղքատացած բանւորութիւն էին անում, իրանց բանն էլ իրանք անում, եթէ միայն տանը բան էլ լինում անելու: Եթէ կային մի երկու հարուստ մարդիկ, նրանք էլ աւելի բարասիրա էին բանց եանին, աւելի կեղեքող, հարստանարող:

Մի քանի օրից յետոյ Թեանը սրտասնկեց հանքագործարանի շուկան գնալու և իր ծառայութիւնը առաջարկելու խանութիւնը:

պահներին, կապալասուներին, հացթուխներին: Նա պատրաստ էր ամեն սև գործ կատարելու, բայց ոչ ոք նրան աշխատանք չը տառ, քինափնդիր կառավարչի աշքին ջնինելու համար:

Ու մնաց անգործ, աշխատազուրկ:

Մարեանը գիշերը ցերեկ շնած իր աղքականների դրանը մանր մունր աշխատանքներ էր կատարում, մի երկու հաց սոսանում, ու դրանով մի կերպ ապրում էին օր սոված, օր կուշտ: Էլ նրանց գուռը բաց անող ըշկար:

Բայց մի օր նրանց գուռը բաց անող եղաւ. դա գիւղի գգիրն էր, որ ծանուցագիր էր բերել թեանին դատարան կանչելու եանու պահանջի հիման վրայ: Եանին պահանջում էր պարտը: Նաստացած թեանը վեր կացաւ կսաց, ընկաւ եանու ձեռք ու ոորին:

Եանին նրան ըլխուկեց, չընայնոյեց, այլ սկսեց խաղալ նրանով, ինչպէս կատուն մինով կըխաղար: Յետոյ դատարանից կատարողական թերթ վերցնելով, ասեց. կուզեմ տունդ բերանքսի վայր կանեմ, կուզեմ կը շինեմ:

—Ի՞նչ եմ արել քեզ, որ մոխիրս քամու ես տալիս. հարց-րեց լացակումած թեանը:

—Անողն է արել պատասխանեց եանին: Ես եանին եմ—կուզեմ քեզ աեղ տալ՝ կըտամ, թէկուզ դող էլ ես:

—Ասում եմ սուտ է, համարեա աղաղակեց թեանը: Դանակը ոսկրիս հասաւ: Միսս կերաք, կաշիս էլ տրէխ չըպիտիք անիլ խօ...

Եանին լոեց մասձմունքի մէջ ընկնելով: Նա ինչ որ ծրագիրներ էր յօրինում իր մտքում: Անթեղած կիրքը նորից բոցավառեց նրա սրտի մէջ ու նա երեւակայեց թէ արդէն ապահնովապէս կըտիրանար Մարեանին: Նա զլխով արաւ թեանին և ուղեց բայլերը գէպի գինետուն: Թեանը վիզը ծուռ հետեւում էր նրան: Եանին համարձակ մտաւ գինետուն, թեանը մնաց շէմքումը

պոշկած. Նա չէր համարձակում ներս մտնել, գինետունը, ուր նա շատ քէփեր էր արած, էլ նրա տեղը չէր, նա ուզեց գլխակոր վերագառնալ բայց Եանին նրան կանչեց, և զոռով նստեցրեց իր կշտին մի առանձին սեղանի մօտ, ու օղի, գինի, խորոված պահանջեց:

Երբ պահանջը եկաւ, նա օղի ածեց թեանի համար, բայց թեանը թուրը կուլ տալով գլուխը շարժեց: Նրա կոկորդով հաց կուլ կը գնած. նրա աշքի առաջ կանգնած էին սոված երեխայրը: Կուլ կը գնած.

—Զէ, կուլ չի գնալ, ասեց նա. թէ ծալաւ ենք՝ լոխը էլ ծարաւ ըլենք, սոված ենք՝ լոխը էլ սոված ըլենք: Ես կշտանամ:

իիգանս սովից կոտորւեն:

—Իրօք այդքան վայր ես պրել, հարցրեց Եանին:

—Էլ տեղ ես թող արել, պատասխանեց դառնութեամբ թեանը, Եանու աշքերին յառելով իր տրտում աշքերը:

Եանին մի սոսկում դգաց. նրա սրտի մէջ խղճի պէս մի բան շարժեց, և նա զլխին թափ տալով շտապեց հեռացնել իրանից:

Թեանին, որի ներկայութիւնը հիմիկ սկսում էր նրան ճնշել, նեղիլ: Դէ քեզ այս հայն ու խորովածը, տար խիզանդ ուտեն, ասեց նա յանկարծ մի քանի կատը հաց ու խորոված ջոկելով: Տար, յետոյ բանը բան նշանց կըտայ: Թեանը ցնցւեց՝ չանթեց հացն ու խորովածը ու գուրս թուաւ, և տուն հասնելու պէս ձայն տւաւ, հաց՝ խորոված:

Մարեանը զարմացած նայեց նրա երեսին, երեխաները ձչաւով յարձակւեցին հացի ու խորովածի վրայ:

—Եանին տւաւ, ասեց թեանը: Հաւատանց ձեռքէս բռնի էլ: Նրա հացը թոյն է ինձ համար, ասեց նա:

Մարեանը ձեռքը յետ բաշեց հացին էլ, խորովածին էլ:

—Հացը բերանում կաղալեց, կնիկ, ասեց թեանը խեղձ խեղձ: Մի ձեռք որ կարում չին կարիւ պաշիլ պիտես: Աշխարհիս խեղձ: Մի ձեռք որ կարում չին կարիւ բիբիլն է, բայց բնչ անես. մարդայանգն է տնէնց: Նրա տեղը Սիրիլն է, բայց բնչ անես. մարդայանգն է միջի էլ պատիր ունի, գեղամիջի էլ ձայն, որովհետեւ հարուստ է: միջի էլ պատիր ունի, գեղամիջի էլ ձայն է ածում: Նա իմ տունը քանդեց, նրա տունը կապիչտը քանդի: Նրանում էլ չի մնալ. այ մարտովը—հրէն ձորումը մոնչող վիշապը, որ արիւսս ծծեց, նրանն էլ կը ծծի: ձորումը մոնչող վիշապը, որ արիւսս ծծեց, նրանն էլ կը ծծի:

Նա գիփի արիւսս էլ ծծիլ պիտի, իթէ հրետին գլուխը ջարդող չըդուրս գայ: Մարդը աշքածակ կըլինի. մի պաղունց հող է նրան չըդուրս գայ: Մարդը աշքածակ կըլինի. մի պաղունց հող է նրան չըդուրս գայ: Փող են դաղում, խմել սովորում, անառակութեան կըտացնում: Փող են դաղում, խմել սովորում, խոփն ու տալիս իրանց: Գութանն էլ է սարբահան լինում, խոփն ու տալիս իրանց: Լծանուում, լծանուն էլ է մորթւում, հողն էլ է անձիչն էլ ժանգուում, լծանուում, մորթւում, հողն էլ է անձիչն էլ ժանգուում: Դառնում ես վիշապի մսացուն: Նա քեզ պացտքանում: Դառնում իս գաղապի մսացուն: Նա քեզ պացտքանում է իր փորի համար, իր անկաշում փորի: Բն, մին տալիս է իր փորի համար, իր անկաշում փորի: Բն, մին տալիս է տալիս առնում: Մըջիւնի պէս դիփն էլ նրա համար են է, տասը յետ առնում: Մըջիւնի պէս դիփն էլ նրա հարգ մրջիւն չիք կըում. թեղ տալիս: Վիշապը պոչն ածեց—մի շարք մրջիւն չիք կըում. —Ի՞նչ փոյթ: Մըջիւների նոր նոր շարքեր կըգան սատ-ըրաւ. —Ի՞նչ փոյթ: Մըջիւների նոր նոր շարքեր կըգան սատ-ըրաւ. որովհետեւ սոված են, անձար....

—Բըշչակ գառնայ գա, անիծեց Մարեանը:

—Բըշչակ էլ գառնայ, կործանւի էլ, կնիկ, կոչեց թեանը:

Բայց Ասուած էլ է հզօրների կողմը պահում: Ախր հարուստ ները միջոց ունեն նրա սիխաց շանելու: Արգարութիւն չըկայ, ար-

ները միջոց ունեն նրա սիխաց շանելու: Մըկանից խածով մատաղ էլ են անում, եկեղեցի էլ գարութիւն: Կախում մարդիկ են—խեղճին հուպ նրանց բանը աշուրում է: Կախում մարդիկ են—խեղճին հուպ նրանց բանը աշուրում է: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ: Կըտայ:

—Կախում մարդիկ շուրջութիւն: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ:

—Կախում մարդիկ շուրջութիւն: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ:

—Կախում մարդիկ շուրջութիւն: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ:

—Կախում մարդիկ շուրջութիւն: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ:

—Կախում մարդիկ շուրջութիւն: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ: Կախում մարդիկ գտնութիւն գուուը կըտայ:

տւած, Զատին մարդի գալուստ սրտից է ջուր խմում...

Բայց յանկարձ հանքագործարանի կողմից սուլոցներ լսւեցին,
երկար՝ աղմկահարող սուլոցներ: Թեանը լոեց ականջները սրելով:
—Ա կնիկ, հէնց է անէծքը տեղ հասած, ասեց նա ուրախ:
Բան է պատօնել, բրիշակ է լինում:

—Դա խօ հատուցում կրլէր, պատասխանեց Մարեանը:

Թեանը էլ չըլսեց կնոջը. նա գուրս թռաւ; Շատերն էին վա-
զում դէպի հանքագործարանը, ինքն ու վաղեց: Իսկ մերենաները
սուլում էին ու աղմկահարում: Գործարանի ժխորը և շառաչումը
մի ընդհանուր բոց էր գարձել:

Ահագին նաւթամբարից դէպի հնոցները տանող խողովակը
պայթել էր ու նաւթը բոնկել էր ամրող տարածութեան վրայ: Պայթած խողովակից նաւթը վիճում էր ուժգնութեամբ և հրդեհը
գնալով գնալով մեծ չափեր էր ստանում, տարածում: Հրային
լեզուները թանձր ծիս մէջ պլպլում էին, խախալում դէս ու
դէն. բոցը մին տուն էր տալիս, մին կատաղութեամբ վեր նետ-
ում, նաւթամբարի երկաթ պատերը լիզում, յետ բաշում:

Հարիւրաւոր ձեռքեր աշխատում էին հրդեհի առաջն առնել,
հանգցնել կրակը: Ահագին վտանգը ակներն էր: Եթէ նաւթամ-
բարը պայթէր, հրդեհը մի ակնթարթում կըկլանէր շնչքերն էլ,
խանութներն էլ, փայտի պահեստն էլ, և այն ժամանակ անխո-
սափելի էր մարդկանց կորուսալ և հանքագործարանի կործանու-
մը: Այդ պատճառով բոլորն էլ դուրս էին եկել հրդեհը հանգց-
նելու և կորստից փրկելու իրանց որդեկանցն էլ իրանց ստաց-
ւածքն էլ բայց հրդեհը չէր զսպւում, որովհետեւ մի կողմից նաւթը
խփում էր շատրուանի պէս:

Ահաբեկւած կառավարիչը թեերին տալով հրամաններ էր
արձակում աջ ու ձախ, հայիոյում, սպասնում, բայց հալոցներում
ծառայող վարժ մարդիկն անգամ չէին զիմանում հրդեհի տարբու-
թեանը և ընկրկում էին, թէս ահը խիստ էր քանց մահը:

—Ծորակը, ծորակը, պաղպակում էր յուսահատութեան մէջ
ճարտարապետը: Ու բոլորն էլ հասկանում էին այդ առանց նրա
ասելի էլ. Եթէ ծորակը ծածկէր, էլ նաւթ չէր գալ նաւթամբա-
րից, հրդեհն էլ կը շիշէր: Բայց ով էր զիմից ձեռք վեր առել այդ
խիզախ քայլն անելու. ծորակը՝ որ կպած էր նաւթամբարի պա-
տին յատակից մօտ, չէր երեսում ծիս մէջ, չորս կողմն էլ կրակ:

Թեանը մի վայրկեան կանգնեց, մտիկ տւաւ այդ սարսա-
փելի տեսարանին: Բանուրներն ու բնակիչները խուճապած վազ-
վում էին դէս ու դէն, մանուկները ճչում էին, կնանիքը, իրանց
կուրծքը ծեծում: Իրարանցման մէջ իրար չէին ձանաչում, իրար
չէին հասկանում: Ինչ էր սպասում գրանց, այդ խեղներին, եթէ
Դաւթամբարը պայթէր: Մի բոպէում կրակի ծովը կը կլանէր նը-
րանց: Ու նրա աչքին երկութացան այրւող մանուկներ...

Նա լոեց ճարտարապետի աղաղակը, ցնցւեց, փափախը յօն-
քերին կոխեց, չուխայի համտակը դիխովն ածեց, վազեց նաւթամ-
բարի մէւս կողմով, կորաւ մուխի մէջ, մի ակնթարթում ծորա-
կին հասաւ, կանթը շուռ աւեց ու գուրս թռաւ բոցի միջից:
Թէս մորթէ փափախն ու բրգէ հաստ չուխան մասամբ
պաշտպանել էին նրան, բայց և այնպէս նրա ձեռքերը խանձել
էին, նրա շունչը կտրւում էր: Բայց նա իր ցաւը մոռացած, իս-
կոյն խառնւեց բանուրների բազմութեանը և թեակոխած սկսաւ
օդնել իր ընկերներին:

Նաւթի հոսանքը դագարեց: Հրգեհը թշկեց:

Քաջալերւած բանուրները հաղ ածեցին նաւթամբարի մօտեր-
քըն այրւող նաւթի վրայ ու կամաց կամաց յաղթեցին կրակին:
Հրդեհը շիշաւ, ծուխը ցնզեց, երկինքը բացւեց:

Կառավարիչը ճարտարապետի հետ յաղթութիւն տարած զօ-
րավարների պէս յոխորտանքով ու խրոխտապանծ, իսկ բանուր-
ները նրանց յետեկց ուռայ տալով գնացին իրանց բանին: Նրան-
ցից ամեն մէկը միւսից աւելի պինդ էր ուզում ուռայ տալ, միւ-
սից աւելի շատ էր ուզում մօտենալ կառավարչին, որ աշքի ընկ-
նէր եթէ ոչ պարզէի՝ գոնէ գովասանքի արժանանալու, ու խըռ-
նուում էին, իրար հրում:

Բայց թեանի վրայ մտածող չըկար, նա մնացել էր աննկատե-
լի, լքւած, անուշադիր: Ոչ ոք էլ շիմացաւ, որ նրանց փրկողը
իրանց վլոնդւած ընկերն էր, որ հանքագործարանը աւերումից ա-
կատողը անարգւած ու զրկւած բանուրն էր: Ոչ ոք նրան մի
քաղցը խօսք չասեց, ոչ ոք չընհետաքրբեւեց նրանով:

Նա մնաց միայնակ: Նա կանգնեց, կանգնեց, մրմիջող ձեռ-
քերը ծոցը կոխած, վարանւած նայեց նաւթամբարին, նայեց ներ-
քե դէպի շինութիւնները: Այդ հսկայ շինութիւններից ոչ մէկը
չէր պլծնիւ, եթէ նաւթամբարը պայթէր, բայց հիմիկ նրանք էլ
էին խոժող դէմքով նայում:

Թեանը նստեց տեղը և կռնեց մի քարի: Նա քրանքում մը-
տել էր և յոգնել: Նա իսկի չէր էլ մտածում իր յոգնածութեան
մասին, և ոչ իր արածի մասին: Նա կսկիծ չէր զգում մարգկանց
ապերախտութիւնից: Այդ բոլորը սովորականի պէս եկան — գնա-
ցին: Միայն վազւան ապրուստի հարցն էր սկ ուրեականի պէս
կանգնել նրա առջև:

Ինչ անէր, և մտ զիմէր՝ հանքագործարանում մի որ և է աշ-
խատանք ճարելու համար: Նա պատրաստ էր անմռունչ տանելու
ամեն նեղութիւն, նա պատրաստ էր պայմանագիրը իր սրտի
արիւնով ստորագրելու, իր սրտի արիւնով:

Ու թւաց նրան թէ իրը մի տարօրինակ կերպարանը է մօ-
տենում նրան: Եւ մօտենալով մեծանում է, մեծանում: Թեանը մի
տեսակ ճնշում է զգում ու կուչ է գալիս այդ վիթխարի կերպա-

բանքի հանդէպ: Բայց այդ տարօրինակ կերպարանքը յանկարծ մարդի տեսք է ստանում: Կառավարիչն էր նա, բայց կարծես մի մասը եանին էր: Եւ այդ խառնուրդը գրպանից մի թուղթ է հանում, առաջարկում իր սրտի արիւնով ստորագրելու: Թեանը ստորագրում է և հոգին ծախում: Ու յանկարծ բացւում է նրա կապ բախտը: Յաջողութիւն յաջողութեան հակեց: Ոսկին հեղեղի պէս է թափւում նրա քրպանը: Ոսկի, ոսկի, չորս կողմը ոսկի: Ոսկու լեռներ են գոյանում, նրան ճնշում իրանց ահանդի ծանրութեան տակ: Նա խեզզում է, շունչը կարւում է: Մահւան տազնապի մէջ նա սարսուռ է զգում ու ձիգ անուռ իրան թափահարելու, աղաղակելու, ու յարկարծ զարթնում է:

Տեսիքը չքացաւ:

Թեանը երկիւղի մէջ շուրջը նայեց պլշած աշքերով: Նա էլ նոյնն էր ինչ որ կար: Բայց միայն նա մրսում էր, կարծես թակւած լինէր: Դառն մտքերի մէջ նա քնող էր անցել ու ցուրտ էր առել նրան:

—Ծիտն երազում կորեկ կըտեսնի, մտածեց նա ու տնքալով վեր կացաւ:

Արդէն երեկոյ էր, ցուրտն ընկած:

Նա մէջքակոտոր, թանչելով ու ոտքարշ տալով մի կերպ տուն հասաւ ու ձղոտի պէս մեկնեց թազքի վրայ:

Թէև Մարեանը տաք ջրում դրաւ նրա ոտները, խանձիլ կցեց նրա փշառտած ձեռքերը, բայց նա սկսեց կեծութիւն տալ, զառանցել, ու լուսաբացին մեռաւ առանց ուրիշի ուշք գրաւելու, առանց իրարանցում զցելու:

Նա հանգաւ ճրագի պէս: Նա գլորեց հնձած խոսի պէս:

Աշխարհն էլ այն էր, նա միայն պակասեց աննկատելի կերպով: Նրա ճակատագիրն էլ այդպէս էր գրւած նախախնամութեան տնօրինութեամբ:

Բայց մեռելը տափին չէր կարող մնալ: Մարեանի հօրանք հաւաքւցին ու հանգուցեալին թաղեցին իր հօր ու մօր կշաին մի թեթև ժամահաց էլ տւին: Յետոյ նրանը Մարեանի համաձայնութեամբ վաճառեցին թեանի խրճիթը ու նրա պարտքը տւին լիովին:

Ու մեաց Մարեանը անտոնն, անպայտպան, իր որբիկների հետ լրւոծ ու միայնակ: Ու գնաց նա ընկաւ իր մարդի գերեզմանի վրայ, երեսը կոխեց գլխաքարին ու հծաց. «Գերեզմանիդ մատաղ, ա իմ տէր. տիրական, ծախեցի տունդ—պարտքդ տւի, հոգիդ աղատեցի: Հանգիստ կաց: Քո գլխատած աղախինը քեզ չի ուրանալ—վախես ոչ: Ոչ կուտեմ, ոչ կըքնեմ, որբերիդ գոները չեմ զցիլ, աշքիս լոյսի պէս կըպահեմ: Որդուդ արհեստի կըտամ, գնայ իր արեի ձայնն ածի, վրէդ քար զցի, էլի ծուխու ծխի»...

Նա մորմոքում էր, իսկ այնտեղ ձորում հանքագործարանը սոված վիշապի պէս մընչում էր նորանար զուերի ակնկալած.....

2013

13081

